ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ (30.06.2011 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ[4] տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից, քանի որ վերջիններում ներառված են նաև ՀՀ տարածքից դուրս ներգրավված և տեղաբաշխված միջոցների մեծությունները:

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.06.10-30.06.11թթ. ժամանակահատվածում (այսուհետ՝ հաշվետու տարում) բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալն ավելացել է 40.6%-ով և կազմել 1 տրլն 114 մլրդ դրամ:

30.09.00-30.06.11թթ. ժամանակահատվածում ներկայիս գործող բանկերի՝ ՀՀ և ԼՂՀ տարածքներում տեղաբաշխած ընդհանուր վարկերն ավելացել են 15.6 անգամ, իսկ 30.09.2000թ. գործող բոլոր բանկերի ընդհանուր վարկային ներդրումների համեմատ՝ 10.5 անգամ (տե՛ս աղյուսակ 1 և գծապատկեր 1):


Աղյուսակ 1 . Բանկերի տրամադրած վարկերի ծավալները

Ցուցանիշներ	30.09.00 *(մլն դրամ)*	31.12.01 *(մլն դրամ)*	30.06.03 *(մլն դրամ)*	30.06.04 *(մլն դրամ)*	30.06.05 *(մլն դրամ)*	30.06.06 *(մլն դրամ)*	30.06.07 *(մլն դրամ)*	30.06.08 *(մլն դրամ)*	30.06.09 *(մլն դրամ)*	30.06.10 *(մլն դրամ)*	30.06.11 *(մլն դրամ)*	30.09.00 - 30.06.11 *(%)*	30.06.10-30.06.11 *(%)*
Բոլոր բանկերը	96933	87004	91163	124386	159043	225327	307123	556483	632074	792046	1113783	1049	41
30.06.11թ. դրությամբ գործող բանկերը	67144	74703	90146	124386	159043	225327	307123	556483	632074	792046	1113783	1559	41

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*


[4] *ԼՂՀ-ին վերաբերող տվյալները տարանջատված չեն ՀՀ մարզային տվյալներից, և ԼՂՀ ու ՀՀ տարածքների տվյալները դիտարկված են ընդհանուր համատեքստում:*

Գծապատկեր 1




30.06.10 - 30.06.11թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումների աճ գրանցվել է բոլոր մարզերում: Առավել բարձր աճի տեմպ արձանագրվել է Սյունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերում, համապատասխանաբար՝ 76.9%, 72.8% և 58.0% (տե՛ս հավելված 1.7):

Գծապատկեր 2



** Պատկերի հստակության նպատակով Երևանի ցուցանիշները չեն ներառվել, Երևանում վարկային ներդրումների ծավալը 30.06.2011թ. դրությամբ կազմել է 737 մլրդ դրամ:*


Հաշվետու տարում Երևանում վարկային ներդրումներն ավելացել են 35.9%-ով (194.7 մլրդ դրամով), իսկ մարզերում և ԼՂՀ-ում՝ 50.8%-ով (127.1 մլրդ դրամով), ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 66.1% (տե՛ս գծապատկեր 3, հավելված 1.2):



1. Երևան, 2. Արարատ, 3. Կոտայք, 4. Արմավիր, 5. Արագածոտն, 6. Շիրակ, 7. Լոռի, 8.

2000-2011թթ. ժամանակաշրջանում վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 65-70%-ի շրջանակներում: 31.12.01թ. դրությամբ միայն Երևանում վարկային ներդրումների մասնաբաժինը զգալի նվազել է՝ պայմանավորված այդ ժամանակաշրջանում Լոռու մարզում քիմիական արդյունաբերության վարկավորման ծավալների 4.8 մլրդ դրամ աճով (որը հետագայում դարձյալ նվազել է) և Երևանում էներգետիկայի վարկավորման ծավալների 5.5 մլրդ դրամ նվազմամբ (տե՛ս գծապատկեր 4):

Գծապատկեր 4



Հաշվետու տարվա ընթացքում ակտիվների քանակն աճել է 47.2%-ով: Նույն ժամանակահատվածում Երևանին բաժին ընկնող ակտիվների տեսակարար կշիռը աճել է 1.9 տոկոսային կետով և 30.06.2011թ. դրությամբ կազմել 37.8%: Երևանում վարկերի նշված աճը հիմնականում պայմանավորվել է առևտրի, արդյունաբերության (հիմնականում՝ էներգետիկա), ֆինանսական հատվածի, սպառողական և

շինարարության ճյուղերի վարկավորման՝ համապատասխանաբար 35.8% (կամ 46.3 մլրդ դրամ), 39.1% (կամ 39.9 մլրդ դրամ), 89.4% (կամ 28.2 մլրդ դրամ), 25.9% (կամ 20.8 մլրդ դրամ) և 38.2% (կամ 17.6 մլրդ դրամ) աճով:

ՀՀ մյուս 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկերի աճը հիմնականում պայմանավորվել է արդյունաբերության (հիմնականում՝ էներգետիկա, սննդամթերք), սպառողական, գյուղատնտեսության, առևտրի և շինարարության ճյուղերի վարկերի՝ համապատասխանաբար 75.6% (կամ 37.6 մլրդ դրամ), 36.5% (կամ 23.1 մլրդ դրամ), 40.8% (կամ 18.4 մլրդ դրամ), 32.4% (կամ 12.0 մլրդ դրամ) և 85.4% (կամ 11.0 մլրդ դրամ) աճով: ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Տավուշի մարզի) և ԼՂՀ-ում գրանցվել է արդյունաբերության վարկավորման աճ: Արդյունաբերության ճյուղի համեմատաբար խոշոր աճ է արձանագրվել Արարատի (7.2 մլրդ դրամով), Շիրակի (6.7 մլրդ դրամով) և Սյունիքի մարզերում (5.3 մլրդ դրամով):

Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է նաև գյուղատնտեսության վարկավորման աճ, որին նպաստել է նաև Կառավարության գյուղատնտեսության վարկավորման սուբսիդավորման ծրագրի մեկնարկումը:

30.06.10 - 30.06.11թթ. ընթացքում.

- արդյունաբերության վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Տավուշի մարզի,
- շինարարության վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Արարատի մարզի,
- տրանսպորտի և կապի վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում՝ բացառությամբ Կոտայքի մարզի. ԼՂՀ-ում նկատվել է վարկային պորտֆելի նվազում,
- առևտրի վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում. ԼՂՀ-ում նկատվել է վարկային պորտֆելի նվազում,
- սպառողական վարկերն աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում,
- հիփոթեքային վարկերն աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Կոտայքի մարզի:

Ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության՝ հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումներում 2 տոկոսային կետով ավելացել են արդյունաբերության ճյուղի և ֆինանսական հատվածի տեսակարար կշիռները: Փոխարենը նվազել են սպառողական վարկերի, առևտրի և հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռները (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի (բոլոր բանկերը)

%


Ճյուղեր	30.09.00	31.12.01	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.09	30.06.10	30.06.11
Արդյունաբերություն	34	38	31	26	22	20	16	12	15	19	21
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8	6	6	5	7	6	6
Շինարարություն	2	3	4	4	4	4	5	6	7	8	8
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2	2	1	2	2	3	3
Առևտուր	11	17	20	21	22	22	20	20	21	21	20
Ֆինանսական հատված	7	6	7	7	5	6	5	5	4	4	6
Սպառողական վարկեր	18	14	21	27	27	26	29	29	22	18	17
Հիփոթեքային	-	-	-	-	4	8	11	13	13	11	9
Այլ ճյուղեր	18	9	6	7	6	6	7	8	9	10	10

Ընդհանուր վարկերի բաշխվածությունը տնտեսության ճյուղերում ըստ մարզերի բևեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի. Երևանին բաժին է ընկնում գյուղատնտեսական ընդհանուր վարկերի 7%-ը) (տե՛ս հավելված 1.2): Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերում ամենամեծ տեսակարար կշիռ ունեն Արմավիրի մարզը՝ 20.2%, Կոտայքի մարզը՝ 18.7% և Արարատի մարզը՝ 16.4% (30.06.2010թ. դրությամբ՝ համապատասխանաբար՝ 23.1%, 14.3%, 17.8%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ Վայոց ձորի մարզը՝ 2.0% և Տավուշի մարզը՝ 2.3% (30.06.2010թ. համապատասխանաբար՝ 2.4%, 2.1%):

Երևանում գյուղատնտեսական վարկերից հետո ցածր կենտրոնացվածություն ունեն սպառողական և արդյունաբերության վարկերը, համապատասխանաբար՝ 53.9% և 61.9% մասնաբաժիններով, ընդ որում, նախորդ տարվա համեմատ, նշված ճյուղերի վարկային պորտֆելներում Երևանի մասնաբաժինները համապատասխանաբար նվազել են 2.0 և 5.3 տոկոսային կետերով:

Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ ՀՀ մարզերում (բացառությամբ՝ Երևանի) և ԼՂՀ-ում վարկային պորտֆելը չափավոր կենտրոնացված է. ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.01 կետով և 30.06.2011թ. դրությամբ կազմել 0.125: Նույն ցուցանիշի միջին մեծությունը ըստ ՀՀ մարզերի (բացառությամբ՝ Երևանի) և ԼՂՀ-ի կազմել է 0.161՝ վկայելով որոշ մարզերում վարկավորման ճյուղային համեմատաբար բարձր կենտրոնացվածության մասին (տես գծապատկեր 5):


Գծապատկեր 5



Վարկային ներդրումների ժամկետայնության առումով՝ հաշվետու տարում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 76.2%:

30.06.11թ. դրությամբ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալները գերազանցում են կարճաժամկետ վարկերի ծավալները (տե՛ս հավելված 1.3):

Գծապատկեր 6



Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 5 տոկոսային կետով և 30.06.11թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 59.1%-ը (տե՛ս հավելված 1.4):

ՀՀ գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ՝ Երևանի, Կոտայքի և Լոռու մարզերի, դրամային վարկերի տեսակարար կշիռը գերազանցում է արտարժութային վարկերի տեսակարար կշիռը: Վարկային ներդրումների համեմատաբար մեծ մասնաբաժին ունեցող Երևանում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզում ըստ արժույթի տեսակի վարկային ներդրումների կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 3. Արտարժութային վարկերի տեսակարար կշիռները 2000 - 2011 թթ.

%

Ժամանակաշրջան	Երևան	ԼՂՀ	Կոտայքի մարզ	*Ընդամենը*
30.09.00թ.	88	46	85	84
31.12.01թ.	82	83	75	82
30.06.03թ.	65	92	90	71
30.06.04թ.	65	67	72	68
30.06.05թ.	67	55	74	67
30.06.06թ.	59	39	64	59
30.06.07թ.	47	20	41	41
30.06.08թ.	40	21	32	37
30.06.09թ.	52	50	55	51
30.06.10թ.	59	44	50	54
30.06.11թ.	64	54	60	59

Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են 45.5%-ով կամ 115.7 մլրդ դրամով (տե՛ս հավելվածներ 1.7 և 1.8): Արդյունքում՝ ընդհանուր վարկային ներդրումների կազմում փոքր և միջին բիզնեսին[5] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 1.1 տոկոսային կետով և 30.06.11 թ. դրությամբ կազմել 33.2% (տե՛ս հավելված 1.1): Հատկանշական է, որ փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերում Երևանի մասնաբաժինը նվազել է 5.8 տոկոսային կետով՝ կազմելով 60.0% (տե՛ս հավելված 1.2):

Միջազգային վարկային ծրագրերով[6] տրամադրված վարկերը հաշվետու տարում ավելացել են 18.3%-ով և 30.06.2011թ. դրությամբ կազմել 173.4 մլրդ դրամ: Արդյունքում, նախորդ տարվա համեմատ, միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում նվազել է 2.9 տոկոսային կետով և հաշվետու տարվա վերջին կազմել 15.6% (տե՛ս գծապատկեր 7):

30.06.2003 - 30.06.2005 թթ. միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշիռը տատանվել է 14-17%-ի շրջանակներում: 30.06.2005-30.06.2007թթ. նկատվել է դրանց տեսակարար կշռի նվազում մինչև 10.2%՝ պայմանավորված բարձր տնտեսական աճի պայմաններում միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի աճի նկատմամբ այլ աղբյուրների հաշվին տրամադրվող վարկերի առաջանցիկ աճի տեմպով: 30.06.2008-30.06.2010թթ. ժամանակահատվածում միջազգային վարկային ծրագրերի շրջանակում տրամադրվող միջոցների տեսակարար կշիռը ավելացել է 8.3 տոկոսային կետով և 30.06.2010թ. դրությամբ կազմել 18.5%: Դա հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում բանկերի վարած զգուշավոր վարկային քաղաքականության հետևանքով ընդհանուր վարկային ներդրումների աճի զգալի դանդաղեցմամբ:

Հաշվետու տարում միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշռի 2.9 տոկոսային կետով նվազումը կարելի է բացատրել դեռևս 2010թ. երրորդ եռամսյակից բանկերի դրսևորած ակտիվ վարկային քաղաքականությամբ, ինչի արդյունքում արձանագրվել է միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների նկատմամբ ընդհանուր վարկային ներդրումների առաջանցիկ աճ:


---

[5] Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը մինչև 100 աշխատող է:

[3] Միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր են նաև միջազգային ծրագրերի (օր. Գերմանա-հայկական հիմնադրամի ծրագրեր, Համաշխարհային բանկի Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր և այլն) շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրված վարկերը:

Գծապատկեր 7


Միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրվող միջոցների տեսակարար կշիռը ներկայումս գործող բանկերի ընդհանուր վարկային ներդրումներում



Երևանում միջազգային վարկային ծրագրերով տրամադրված միջոցները ավելացել են 20.8%-ով և 30.06.2011 թ. դրությամբ կազմել 95.4 մլրդ դրամ, իսկ մարզերում նմանատիպ ծրագրերով տրամադրված վարկերը ավելացել են 15.4%-ով՝ 30.06.2011թ. դրությամբ կազմելով 78.0 մլրդ դրամ (բացառություն են կազմել Տավուշի, Լոռու, Արմավիրի և Արարատի մարզերը, որտեղ միջազգային վարկային ծրագրերով տրամադրված վարկերի աճ չի արձանագրվել): Արդյունքում՝ նախորդ տարվա համեմատ, Երևանի մասնաբաժինը միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցներում ավելացել է 1.1 տոկոսային կետով և կազմել 55.0% (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8


Ներկայումս գործող միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրվող միջոցների կառուցվածքը



Թեև նախորդ տարվա համեմատ մարզերին տրամադրված ընդհանուր վարկերում միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշիռը նվազել է 6.3 տոկոսային կետով, սակայն դրանց տեսակարար կշիռը դեռևս բավականին բարձր է (20.7%), ինչը վկայում է ՀՀ մարզերի համար միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորման կարևորության մասին (տե՛ս հավելված 1.1):

Գծապատկեր 9

Միջազգային ծրագրերով տրամադրած վարկերի կառուցվածքն ըստ մարզերի




1. Երևան, 2. Արարատ, 3. Կոտայք, 4. Արմավիր, 5.Արագածոտն, 6. Շիրակ, 7. Լոռի, 8. Գեղարքունիք, 9. Տավուշ, 10. Վայոց ձոր, 11. Սյունիք, 12. ԼՂՀ

Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում ժամկետանց վարկային ներդրումների տեսակարար կշիռը աճել է 0.3 տոկոսային կետով՝ 30.06.11թ. դրությամբ կազմելով ընդհանուր վարկային ներդրումների 1.4%-ը (տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 10)[7]:

Գծապատկեր 10

Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում



1. Արարատ, 2. Կոտայք, 3. Արմավիր, 4. Արագածոտն, 5. Շիրակ, 6. Լոռի, 7. Գեղարքունիք, 8. Տավուշ, 9. Վայոց ձոր, 10. Սյունիք, 11. ԼՂՀ

Ինչպես երևում է գծապատկեր 10-ից, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է Արարատի (2.4%), Գեղարքունիքի (1.5%) և Արմավիրի (1.4%) մարզերում, որոնց բաժին են ընկնում ընդհանուր վարկային պորտֆելի (առանց Երևանի) համապատասխանաբար 11.6%-ը, 4.9%-ը և 11.9%-ը:

[7] *Գծապատկերում շրջանակների տրամագծերը ուղիղ համեմատական են ՀՀ մարզերի (բացառությամբ Երևանի) և ԼՂՀ ընդհանուր վարկային պորտֆելում ունեցած տեսակարար կշռին:*

Նախորդ տարվա համեմատ Երևանում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում ավելացել է 0.3 տոկոսային կետով և 30.06.2011թ. դրությամբ կազմել 1.6%: Երևանին բաժին է ընկնում ընդհանուր վարկային պորտֆելի 66.1%-ը:

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.11թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 31 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի 6.7%-ը (30.06.10թ.՝ 7.6%-ը):

30.06.10-30.06.11թթ. ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 23.2%-ով (14.0 մլրդ դրամով)՝ ի հաշիվ գյուղատնտեսության, ֆինանսական հատվածի և հիփոթեքային վարկերի աճի:

Աղյուսակ 4. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	*Վարկերի ծավալ (մլն ՀՀ դրամ)*									*Տեսակարար կշիռ (%)*								
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.09	30.06.10	30.06.11	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.09	30.06.10	30.06.11
Արդյունաբերություն	718	497	1371	2203	3544	4817	7054	8609	3716	23	36	29	26	13	9	13	14	5
այդ թվում՝ սննդի	591	313	742	1152	1196	1494	1584	1544	839	14	30	16	14	4	3	3	3	1
Գյուղատնտեսություն	269	312	537	1046	2481	6676	4790	12529	16797	14	14	11	12	9	13	9	21	23
Առևտուր	54	111	270	1235	6969	9151	7561	10283	12018	5	3	6	15	24	17	14	17	16
Շինարարություն	121	89	112	193	1253	5482	9148	1559	2015	4	6	2	2	4	11	17	3	3
Սպառողական (ներառյալ հիփոթեք)	492	864	1584	2396	8455	13368	12953	9602	16334	40	25	34	28	30	25	24	16	22
Այլ ճյուղեր	324	315	832	1434	5822	13316	10707	16209	23428	14	16	18	17	20	25	20	26	31
Ընդամենը	1977	2185	4706	8508	28525	52811	53798	60335	74311	100	100	100	100	100	100	100	100	100

Հաշվետու տարում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի աճ է արձանագրվել ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Սյունիքի) և ԼՂՀ-ում (տե՛ս աղյուսակ 5): Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված ընդհանուր վարկերում 1.0 տոկոսային կետով աճել է ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող Երևանի մասնաբաժինը՝ կազմելով 56.9%:

Աղյուսակ 5. Վարկերն ըստ մարզերի (հազար ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք	ԼՂՀ
30.06.03												
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640	-
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6	-
30.06.04												
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034	-
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6	-
30.06.05												
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759	-
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6	-
30.06.06												
վարկերի ծավալները	5133064	223093	481738	238415	183164	403482	443152	183109	117965	71290	910830	118594
տեսակարար կշիռները (%)	60.3	2.6	5.7	2.8	2.2	4.7	5.2	2.2	1.4	0.8	10.7	1.4
30.06.07												
վարկերի ծավալները	18824712	1033694	941069	1499227	534782	1062152	1300085	573330	512376	210739	434469	598130
տեսակարար կշիռները (%)	66.0	3.6	3.3	5.3	1.9	3.7	4.6	2.0	1.8	0.7	5.0	2.1
30.06.08												
վարկերի ծավալները	34953514	1877424	2126097	2842366	1097859	1720411	2223500	1038964	1136956	362216	2171493	1260057
տեսակարար կշիռները (%)	66.2	3.6	4.0	5.4	2.1	3.3	4.2	2.0	2.2	0.7	4.1	2.4

30.06.09												
վարկերի ծավալները	36619084	1499920	1948526	2469149	771746	1682260	2394086	691453	1879617	1308447	1761307	772197
տեսակարար կշիռները (%)	68.1	2.8	3.6	4.6	1.4	3.1	4.5	1.3	3.5	2.4	3.3	1.4
30.06.10												
վարկերի ծավալները	33718369	4475028	2224890	4897139	1561345	2045382	2085920	1664782	1168453	544999	2448781	3499700
տեսակարար կշիռները (%)	55.9	7.4	3.7	8.1	2.6	3.4	3.5	2.8	1.9	0.9	4.1	5.8
30.06.11												
վարկերի ծավալները	42298191	5323052	3528503	5805633	2095744	2399728	2163775	1857234	1271198	935024	2349826	4283043
տեսակարար կշիռները (%)	56.9	7.2	4.7	7.8	2.8	3.2	2.9	2.5	1.7	1.3	3.2	5.8

2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ[5]


30.09.00-30.06.11թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված միջոցները ավելացել են ավելի քան 6.3 անգամ: Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները աճել են 9.7 անգամ, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 3.9 անգամ:

Նախորդ տարվա համեմատ, բանկերի կողմից ներգրավված միջոցները ավելացել են 21.9%-ով և հաշվետու տարվա վերջին կազմել 748.8 մլրդ դրամ, ընդ որում՝ բացառությամբ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի, ՀՀ մնացած մարզերում արձանագրվել է ավանդների աճ: Ավանդների նվազում է նկատվել նաև ԼՂՀ-ում՝ մոտ 14%: Նախորդ տարվա համեմատ, ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները ավելացել են 33.6%-ով, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 6.8%-ով և կազմել համապատասխանաբար 462.6 մլրդ դրամ և 286.2 մլրդ դրամ (տե՛ս հավելված 1.7):

Հատկանշական է, որ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները ցուցաբերել են աճի միտում:

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում աճել 3.9 տոկոսային կետով և կազմել 83.9% (ընդ որում՝ 2000-2011 թթ. Երևանում ավանդների կենտրոնացվածությունը տատանվում է 82-85%-ի շրջանակներում): Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում մնացել է նույնը, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցներինը աճել է 9.4 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 84.5% և 82.9% (տե՛ս հավելված 2.2):

Գծապատկեր 11




** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.11 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 628 մլրդ դրամ:*

[5] *Ներգրավված միջոցները ներառում են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ (ներառյալ բանկային հաշիվները) և ժամկետային ավանդները:*


Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ներգրավված միջոցների կազմում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ավելացել է 5.4 տոկոսային կետով՝ կազմելով 61.8% (տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 12): 30.06.11 թ. դրությամբ, ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում են ՀՀ բոլոր մարզերում (30.06.10 թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում էին 9 մարզերում):

Գծապատկեր 12



Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը ավելացել է 5.7 տոկոսային կետով և կազմել 62.6%: ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ժամկետային ավանդների ծավալները գերազանցել են ցպահանջ ավանդների ծավալները (տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 13):

Գծապատկեր 13




30.06.11թ. Երևանին բաժին է ընկել ընդհանուր ցպահանջ ավանդների 85.1%-ը և ընդհանուր ժամկետային ավանդների 83.1%-ը, ընդ որում, 30.06.10 թ. Երևանին բաժին էր ընկել համապատասխանաբար 82.2%-ը և 78.3%-ը, իսկ 30.09.00թ.՝ 82%-ը և 85%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (58.3%) կազմել են իրավաբանական անձանց միջոցները, ինչը արտահայտված է ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Տավուշի մարզի: Ժամկետային միջոցների գերակշիռ մասը (73.7%) կազմել են ֆիզիկական անձանց ավանդները, ինչը արտահայտվել է ՀՀ բոլոր մարզերում: ԼՂՀ-ում ժամկետային ավանդներում գերակշռել են իրավաբանական անձանց ավանդները՝ 70.5% (տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7):

Նախորդ տարվա համեմատ, հաշվետու տարում ՀՀ դրամով ավանդների տեսակարար կշիռը ավելացել է 4 տոկոսային կետով և 30.06.11թ. դրությամբ կազմել ընդհանուր ներգրավված միջոցների 30.9%-ը, ընդ որում՝ 30.09.00թ. դրությամբ ՀՀ դրամով ավանդները կազմել են ներգրավված միջոցների 24%-ը: Բացառությամբ Արարատի, Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերի՝ ՀՀ մյուս մարզերի և ԼՂՀ-ի արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը գերազանցել է դրամով ներգրավված ավանդների տեսակարար կշռին (տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 14):

Գծապատկեր 14

Դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների կառուցվածքը 30.06.11 թ. դրությամբ




Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.11թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 33.1%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 49.6%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից (տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11) :

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

30.06.11թ. դրությամբ բանկային համակարգի կողմից ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը զիջել է վարկային ներդրումների ծավալին (32.8%-ով): Վարկերի ծավալները գերազանցում են ավանդների ծավալները ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում (տե՛ս գծապատկեր 15):

Գծապատկեր 15

Վարկերը և ներգրավված միջոցները ըստ մարզերի՝ 30.06.11 թ. դրությամբ*




** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.11թ. ներգրավված միջոցները կազմել են 628 մլրդ դրամ, վարկերն առանց միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի՝ 641 մլրդ դրամ, ընդհանուր վարկերը՝ 737 մլրդ դրամ:*

Ավանդների և վարկային ներդրումների հարաբերակցությունը առավել բարձր է Երևանում (85.3%), ԼՂՀ-ում (54.6%) և Սյունիքում (42.7%):


Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով՝ հաշվետու տարում մեկ մասնաճյուղին[6] բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները ավելացել են համապատասխանաբար 379.2 մլն դրամով և 826.4 մլն դրամով և 30.06.11թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 1.7 մլրդ դրամ և 2.5 մլրդ դրամ (տե՛ս հավելված 3 և գծապատկեր 16):

Գծապատկեր 16



Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ ցուցաբերել են աճի միտումներ, համապատասխանաբար՝ 21.8%-ով և 40.5%-ով և 30.06.11թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 220 հազար դրամ և 328 հազար դրամ (տե՛ս հավելված 3 և գծապատկեր 17):

Գծապատկեր 17



[6] *Գլխամասային գրասենյակները դիտվել են որպես մասնաճյուղ:*

4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.09.00-30.06.11 թթ. ժամանակահատվածում.

1. ՀՀ, ինչպես նաև ԼՂՀ տարածքներում գործող բոլոր առևտրային բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների ծավալն ավելացել է 10.5 անգամ (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 15.6 անգամ) և կազմել 1 տրլն 114 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Վարկային ներդրումների տարածքային կենտրոնացվածությունը բարձր է. Երևանին բաժին է ընկնում վարկերի 66.1%-ը (30.06.00-30.06.11թթ. ժամանակահատվածում Երևանում վարկերի կենտրոնացվածությունը նվազել է 3.3 տոկոսային կետով):

2. Ավանդները (բոլոր բանկերով) ավելացել են 6.3 անգամ (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 9.8 անգամ) և կազմել 748.8 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ավանդների տարածքային կենտրոնացվածությունը նույնպես բարձր է. Երևանին բաժին է ընկնում ավանդների 83.9%-ը:

3. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- վարկերի որակի բարելավումը. 30.09.00 թ. ժամկետանց վարկերը կազմել են ընդհանուր վարկերի 14%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեին Շիրակի մարզը (30%) և Երևանը՝ (17%)), իսկ 30.06.11թ. դրությամբ՝ ընդհանուր վարկերի 1.4%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արարատի (2.4%), Երևանի (1.6%) և Գեղարքունիքի մարզերը (1.5%)):
- 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշռի կտրուկ ավելացումը (ավելացել է 29 տոկոսային կետով և կազմել 76.2%): 30.09.00 թ. 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալը գերազանցել է մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալը 6 մարզերում (Տավուշ, Գեղարքունիք, Արարատ, Արմավիր, Լոռի և Արագածոտն), իսկ 30.06.11 թ.՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում:

30.06.10 - 30.06.11 թթ. ժամանակահատվածում.

1. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Ավանդների աճ է արձանագրվել ՀՀ բոլոր մարզերում՝ բացառությամբ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի: Ավանդների նվազում է տեղի ունեցել նաև ԼՂՀ-ում: Վարկերի աճի տեմպը (40.6% աճ) գերազանցել է ավանդների աճի տեմպը (21.9% աճ), ինչի արդյունքում վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշը աճել է 0.2 կետով և կազմել 1.5:

2. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- Վարկերի կենտրոնացվածությունը Երևանում նվազել է. Երևանի մասնաբաժինը նվազել է 2.3 տոկոսային կետով և կազմել 66.1%:
- Փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի աճի տեմպը (45.5%) գերազանցել է ընդհանուր վարկային ներդրումների աճի տեմպը (40.6%), ինչի արդյունքում վերջիններիս տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում աճել է 1.1 տոկոսային կետով և կազմել 33.2%:
- մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերը աճել են 53.7%-ով, 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերը՝ 37.0%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկերում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 76.2%: Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրում ավելացել է, իսկ ՀՀ մյուս մարզերում և ԼՂՀ-ում՝ նվազել:
- ՀՀ դրամով տրամադրված վարկերը ավելացել են 25.5%-ով, արտարժույթով տրամադրված վարկերը՝ 53.4%-ով, ինչի արդյունքում դրամով վարկերի տեսակարար կշիռը նվազել է 4.9 տոկոսային կետով և կազմել է 40.9%: ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրում աճել է (բացառությամբ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի):
- ՀՀ դրամով ավանդները ավելացել են 39.8%-ով, արտարժույթով ավանդները՝ 15.3%-ով, ինչի արդյունքում դրամով ավանդների տեսակարար կշիռը աճել է 4 տոկոսային կետով և կազմել է ընդհանուր ավանդների 30.9%-ը: ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Գեղարքունիքի մարզի) և ԼՂՀ-ում դրամային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուրում աճել է:
- Ժամկետային ավանդներն աճել են 34.0%-ով, իսկ ցպահանջ ավանդները՝ 5.9%-ով, ինչի արդյունքում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը աճել է 5.7 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 62.6%-ը:

- Ֆիզիկական անձանց ավանդներն աճել են 33.6%-ով, իրավաբանական անձանցը՝ 6.8%-ով, ինչի արդյունքում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 5.4 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 61.8%-ը: Բացառությամբ Արագածոտնի, Շիրակի և Լոռու մարզերի, ՀՀ մյուս մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշռի աճ:

30.06.11 թ. դրությամբ.

Մարզերում տեղաբաշխված վարկային ներդրումներում տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է առևտրի, արդյունաբերության, սպառողական և գյուղատնտեսության վարկերում *(տե՛ս հավելված 1.1)*.

Արդյունաբերություն. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում բավականին բարձր է արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 5 - 42%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Վայոց ձորի և Սյունիքի մարզերը (42.1% և 31.3%):

Առևտուր. առևտրի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 8 - 24%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, Տավուշի և Սյունիքի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 23.9%-ը, 18.8%-ը և 15.9%-ը հատկացված է առևտրի ճյուղին:

Սպառողական վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում սպառողական վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 13 - 35%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Գեղարքունիքի, Տավուշի և Շիրակի մարզերը, որտեղ սպառողական վարկերի տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 35.3%, 34.1% և 31.2%:

Հիփոթեքային վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 4 - 10%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, ԼՂՀ-ն և Լոռու մարզը՝ համապատասխանաբար 9.7%, 9.3%, 7.0%:

Շինարարություն. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում շինարարության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1 - 15%-ի միջակայքում: Համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ԼՂՀ-ն, Շիրակի մարզը և Երևանը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 14.7%-ը, 10.5%-ը և 8.7%-ը հատկացված են այս ճյուղին:

Գյուղատնտեսություն. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում գյուղատնտեսության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1 - 31%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերը (տատանվում է 25 - 31% միջակայքում), իսկ ամենափոքր տեսակարար կշիռն ունի Երևանը՝ 0.6%:

Հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ. այս ոլորտի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 2 - 13%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերը՝ համապատասխանաբար 12.9%, 6.3% և 5.7%:

Տրանսպորտ և կապ. բոլոր մարզերում այս ճյուղին տրամադրած վարկերն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ՝ 0 - 5%: Ամենամեծ տեսակարար կշիռ ունեն Երևանը և Սյունիքի մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 4.6%-ը և 3.0%-ը հատկացված է այս ճյուղին:

Հավելված 1.1

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Սյունիքի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	19.3	30.2	24.0	17.1	27.8	20.9	27.8	7.8	5.4	42.1	31.3	19.3	20.6
հանքագործական	3.9	6.3	0.9	4.5	3.7	2.2	5.7	9.3	0.2	0.2	62.0	0.6	5.5
էներգետիկա	29.7	0.6	6.0	7.4	60.6	16.3	28.6	57.0	64.6	49.3	24.2	61.4	28.0
սննդամթերք	30.4	70.9	46.1	62.1	10.6	68.0	16.1	10.0	15.3	48.0	11.9	24.3	34.6
թեթև	5.3	1.1	1.3	10.8	0.3	8.7	7.7	3.7	7.1	0.2	0.1	1.6	4.7
քիմիական	1.5	0.5	0.4	0.0	0.0	0.0	36.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	2.6
շինանյութերի	11.1	11.8	17.9	6.5	20.0	4.4	1.4	11.2	10.1	0.8	0.9	6.2	10.0
թանկարժեք իրեր	5.6	0.0	0.5	0.1	3.2	0.1	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.1	3.6
մետալուրգիա	4.8	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	3.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	1.4	0.1	1.0	0.4	0.2	0.0	0.6	4.8	0.0	0.2	0.1	0.0	1.1
արդյունաբերության այլ ճյուղեր	6.3	8.5	25.8	8.1	1.5	0.2	3.3	4.0	2.7	1.4	0.7	5.9	6.9
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	0.6	25.4	21.0	30.8	25.6	11.1	10.1	15.7	14.2	9.6	10.9	6.3	6.1
անասնապահություն	60.6	50.5	89.9	43.7	78.7	86.8	79.3	89.4	84.8	75.0	70.4	52.4	67.3
բուսաբուծություն	39.4	49.5	10.1	56.3	21.3	13.2	20.7	10.6	15.2	25.0	29.6	47.6	32.7
1.3. շինարարություն	8.7	1.4	4.4	4.1	0.6	10.5	6.6	1.1	5.9	5.0	5.0	14.7	7.9
1.4. տրանսպորտ և կապ	4.6	1.1	1.3	1.0	0.3	0.7	1.9	1.2	0.1	1.2	3.0	0.3	3.4
1.5. առևտուր, այդ թվում՝	23.9	12.8	14.7	11.1	13.0	13.5	15.1	14.7	18.8	12.0	15.9	8.2	20.2
մեծածախ առևտուր	59.9	42.9	54.6	26.8	25.3	14.5	36.1	23.1	41.5	67.8	45.9	20.6	54.7
մանրածախ առևտուր	40.1	57.1	45.4	73.2	74.7	85.5	63.9	76.9	58.5	32.2	54.1	79.4	45.3
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	4.6	1.5	5.4	2.9	1.7	3.4	5.4	6.3	12.9	5.7	2.2	3.0	4.4
1.7. ֆինանսական հատված	8.1	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.2	5.6
1.8. սպառողական վարկեր	13.8	21.5	19.6	24.9	24.5	31.2	24.1	35.3	34.1	17.2	23.7	13.4	16.9
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	9.7	4.8	5.4	6.9	4.5	6.0	7.0	6.4	3.8	6.9	6.0	9.3	8.6
2.0. տնտեսության այլ ճյուղեր	6.7	1.2	3.8	1.2	1.8	2.7	1.9	11.5	4.9	0.3	2.0	20.2	6.3
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
2.1. ժամկետանց	1.6	2.4	1.2	1.4	1.2	0.6	0.9	1.5	0.2	0.4	0.4	0.4	1.4
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	12.9	26.2	17.5	25.5	36.0	17.0	19.2	36.5	18.0	45.3	29.7	1.0	15.6
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	30.1	38.3	33.5	30.6	44.1	29.0	47.7	37.1	51.8	48.2	38.1	49.9	33.2
3. Ակտիվների քանակը	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	90.3	95.5	94.9	95.5	46.8	96.0	95.6	96.1	96.9	94.8	95.5	90.8	89.2
3.2. 5 001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3.5	2.4	2.4	2.3	13.4	2.0	2.2	2.1	1.6	2.2	2.5	3.9	3.7
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3.2	1.2	1.6	1.5	24.5	1.2	1.4	1.1	1.0	2.1	1.3	2.8	4.1
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.5	0.4	0.5	0.4	15.1	0.4	0.4	0.4	0.2	0.4	0.3	1.3	2.1
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.5	0.4	0.6	0.4	0.1	0.4	0.4	0.3	0.2	0.4	0.5	1.2	0.8

Հավելված 1.2

Ընդհանուր վարկային ներդրումների միջմարզային ճյուղային կառուցվածքը (30.06.11թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են համակարգի տվյալ ճյուղին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Կոմայրիի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	61.9	5.8	6.3	3.3	2.3	4.1	4.5	0.6	0.3	2.6	3.2	5.0	100.0
հանքագործական	43.7	6.7	1.1	2.7	1.5	1.6	4.7	1.1	0.0	0.1	36.3	0.5	100.0
էներգետիկա	65.6	0.1	1.4	0.9	4.9	2.4	4.6	1.3	0.6	4.6	2.8	10.9	100.0
սննդամթերք	54.3	11.8	8.4	6.0	0.7	8.1	2.1	0.2	0.1	3.6	1.1	3.5	100.0
թեթև	71.1	1.4	1.8	7.7	0.1	7.7	7.5	0.5	0.4	0.1	0.1	1.7	100.0
քիմիական	36.1	1.2	1.0	0.0	0.0	0.0	61.6	0.0	0.0	0.0	0.1	0.0	100.0
շինանյութերի	68.3	6.8	11.3	2.2	4.5	1.8	0.7	0.7	0.3	0.2	0.3	3.1	100.0
թանկարժեք իրեր	95.9	0.1	1.0	0.1	2.0	0.2	0.7	0.0	0.0	0.0	0.0	0.1	100.0
մետալուրգիա	99.9	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	85.2	0.8	6.1	1.3	0.3	0.0	2.6	2.9	0.0	0.5	0.3	0.0	100.0
արդյունաբերության այլ ճյուղեր	56.9	7.1	23.7	3.9	0.5	0.1	2.2	0.4	0.1	0.5	0.3	4.2	100.0
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	6.9	16.4	18.7	20.2	7.0	7.5	5.6	4.2	2.3	2.0	3.8	5.4	100.0
անասնապահություն	6.2	12.3	25.0	13.2	8.2	9.6	6.5	5.6	2.9	2.2	3.9	4.2	100.0
բուսաբուծություն	8.3	24.8	5.8	34.8	4.6	3.0	3.5	1.4	1.1	1.5	3.4	7.9	100.0
1.3. շինարարություն	72.7	0.7	3.1	2.1	0.1	5.4	2.8	0.2	0.8	0.8	1.3	9.9	100.0
1.4. տրանսպորտ և կապ	89.2	1.3	2.1	1.2	0.2	0.8	1.9	0.6	0.0	0.4	1.8	0.4	100.0
1.5. առևտուր, այդ թվում՝	78.3	2.5	4.0	2.2	1.1	2.7	2.5	1.2	0.9	0.8	1.7	2.2	100.0
մեծածախ առևտուր	85.7	2.0	4.0	1.1	0.5	0.7	1.7	0.5	0.7	1.0	1.4	0.8	100.0
մանրածախ առևտուր	69.3	3.1	4.0	3.6	1.8	5.2	3.5	2.0	1.2	0.5	2.0	3.8	100.0
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	69.6	1.4	6.7	2.6	0.7	3.2	4.2	2.3	3.0	1.7	1.1	3.7	100.0
1.7. ֆինանսական հատված	95.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	4.9	100.0
1.8. սպառողական վարկեր	53.9	5.0	6.3	5.9	2.4	7.6	4.8	3.4	2.0	1.3	3.0	4.2	100.0
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	74.7	2.2	3.4	3.2	0.9	2.9	2.8	1.2	0.4	1.0	1.5	5.7	100.0
2.0. տնտեսության այլ ճյուղեր	70.5	0.8	3.3	0.7	0.5	1.7	1.0	3.0	0.8	0.1	0.7	16.9	100.0
2. Մարզի ընդհանուր վարկային ներդրումների տեսակարար կշիռը բանկային համակարգի վարկային ներդրումներում, այդ թվում՝	66.1	3.9	5.4	4.0	1.7	4.1	3.4	1.6	1.0	1.3	2.1	5.3	100.0
2.1. ժամկետանց	75.2	6.6	4.7	3.9	1.4	1.7	2.1	1.8	0.1	0.4	0.5	1.6	100.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	55.0	6.6	6.1	6.6	3.9	4.5	4.1	3.9	1.2	3.8	4.0	0.4	100.0
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	60.0	4.5	5.5	3.7	2.2	3.6	4.8	1.8	1.6	1.9	2.4	7.9	100.0
3. Ակտիվների քանակը	37.8	7.1	7.3	8.7	8.7	8.3	6.7	4.1	2.6	1.7	3.7	3.4	100.0
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	38.3	7.6	7.7	9.3	4.6	9.0	7.2	4.4	2.8	1.8	3.9	3.5	100.0
3.2. 5 001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	35.4	4.6	4.6	5.3	31.2	4.6	4.0	2.2	1.1	1.0	2.4	3.6	100.0
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	29.2	2.2	2.8	3.1	52.0	2.5	2.3	1.1	0.6	0.9	1.1	2.3	100.0
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	26.5	1.4	1.8	1.5	61.9	1.4	1.3	0.8	0.3	0.4	0.6	2.1	100.0
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	69.7	3.4	4.8	3.9	1.2	3.6	3.4	1.6	0.8	0.8	2.0	4.8	100.0

Հավելված 1.3

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային ճյուղային կառուցվածքն ըստ ժամկետների (30.06.11թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան		Արարատի մարզ		Կոտայքի մարզ		Արմավիրի մարզ		Արագածոտնի մարզ		Շիրակի մարզ		Լոռու մարզ		Գեղարքունիքի մարզ		Տավուշի մարզ		Վայոց ձորի մարզ		Սյունիքի մարզ		ԼՂՀ		Ընդամենը	
	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի	մինչև 1 տարի	1 տարի և ավելի
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ																										
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	4.0	15.3	1.7	28.5	3.6	20.4	2.3	14.8	1.0	26.9	0.6	20.3	0.8	27.0	0.4	7.4	0.1	5.2	4.1	38.0	2.6	28.7	0.6	18.7	3.2	17.4
հանքագործական	0.4	3.4	0.1	6.2	0.1	0.8	0.4	4.1	0.4	3.3	0.1	2.1	0.1	5.6	1.0	8.3	0.1	0.1	0.1	0.1	8.0	54.0	0.0	0.6	0.6	4.9
էներգետիկա	6.9	22.8	0.0	0.6	0.0	6.0	7.4	0.0	1.7	58.9	1.1	15.2	0.1	28.5	0.7	56.2	0.0	64.6	8.3	41.0	0.0	24.2	2.2	59.2	4.9	23.1
սննդամթերք	5.2	25.2	1.6	69.2	3.3	42.8	4.0	58.1	0.6	9.9	1.0	67.1	0.7	15.4	0.7	9.3	1.6	13.7	1.0	46.9	0.2	11.7	0.0	24.2	3.8	30.8
թեթև	0.4	4.9	0.1	1.0	0.2	1.1	1.3	9.5	0.1	0.2	0.2	8.4	0.9	6.8	0.3	3.4	0.3	6.8	0.0	0.2	0.0	0.1	0.2	1.4	0.4	4.3
քիմիական	0.9	0.7	0.0	0.5	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.5	35.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.6	2.1
շինանյութերի	0.4	10.6	3.8	8.0	7.8	10.1	0.2	6.3	0.4	19.5	0.2	4.2	0.1	1.4	1.8	9.4	0.3	9.7	0.0	0.7	0.0	0.9	0.1	6.1	1.0	9.0
թանկարժեք իրեր	0.1	5.4	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.1	0.0	3.2	0.0	0.1	0.0	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.1	3.5
մետալուրգիա	4.2	0.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.6	0.4
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	0.3	1.1	0.0	0.1	0.0	1.0	0.0	0.4	0.0	0.2	0.0	0.0	0.3	0.3	0.0	4.8	0.0	0.0	0.0	0.2	0.0	0.1	0.0	0.0	0.2	0.8
արդյունաբերության այլ ճյուղեր	1.7	4.7	0.1	8.4	3.6	22.2	0.0	8.1	0.3	1.2	0.1	0.1	0.2	3.1	0.0	4.0	0.4	2.3	0.2	1.1	0.0	0.7	0.5	5.3	1.3	5.6
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում	0.0	0.6	5.5	19.9	2.5	18.5	7.6	23.2	5.7	19.9	3.7	7.4	3.7	6.4	5.5	10.2	4.8	9.4	2.9	6.7	4.1	6.8	0.9	5.3	1.4	4.8
անասնապահություն	3.9	56.7	13.1	37.4	8.6	81.3	6.2	37.5	14.5	64.2	23.1	63.7	20.0	59.4	27.7	61.7	25.3	59.5	25.4	49.6	16.6	53.8	0.5	51.9	12.1	55.2
բուսաբուծություն	0.9	38.5	8.3	41.2	3.4	6.6	18.4	37.9	7.7	13.6	10.4	2.8	16.5	4.1	7.1	3.5	8.3	6.9	4.7	20.3	21.1	8.4	14.2	33.3	10.2	22.5
1.3. շինարարություն	1.1	7.5	0.6	0.8	0.3	4.1	0.2	3.9	0.2	0.5	1.4	9.1	0.5	6.1	0.6	0.6	1.0	4.9	0.2	4.8	0.4	4.5	3.5	11.2	1.1	6.8
1.4. տրանսպորտ և կապ	1.7	2.9	0.1	1.0	0.0	1.3	0.1	0.9	0.0	0.3	0.0	0.6	0.2	1.8	0.0	1.2	0.0	0.1	0.0	1.2	0.4	2.6	0.0	0.3	1.2	2.3
1.5. առևտուր, այդ թվում	5.0	18.9	0.9	11.9	2.0	12.8	1.0	10.1	3.3	9.7	1.1	12.3	1.2	13.9	1.6	13.1	2.2	16.6	3.1	8.9	1.6	14.4	0.7	7.5	3.8	16.4
մեծածախ առևտուր	16.2	43.7	2.5	40.4	7.0	47.6	1.6	25.2	14.3	11.0	2.0	12.4	1.5	34.6	2.0	21.1	2.3	39.2	18.7	49.1	3.3	42.6	1.3	19.3	13.6	41.1
մանրածախ առևտուր	4.9	35.2	4.5	52.6	6.3	39.1	7.1	66.1	11.4	63.3	6.4	79.1	6.2	57.7	8.8	68.1	9.3	49.3	7.2	24.9	6.4	47.7	7.1	72.3	5.3	40.0
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	0.5	4.1	0.1	1.4	0.2	5.2	0.1	2.7	0.1	1.6	0.1	3.3	0.4	5.0	1.2	5.1	0.7	12.2	0.4	5.3	0.1	2.2	0.1	3.0	0.4	4.0
1.7. ֆինանսական հատված	7.1	1.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.2	0.1	5.0	0.7
1.8. սպառողական վարկեր	3.7	10.0	12.4	9.1	8.6	11.1	13.4	11.5	11.9	12.6	18.5	12.8	10.1	14.0	21.8	13.5	23.2	10.9	10.4	6.9	13.3	10.4	5.9	7.5	6.6	10.3
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	0.2	9.5	0.2	4.6	0.1	5.3	0.0	6.9	0.1	4.5	0.1	5.9	0.1	7.0	0.1	6.3	0.0	3.8	0.1	6.8	0.1	5.9	0.1	9.2	0.1	8.4
2.0. տնտեսության այլ ճյուղեր	1.4	5.3	0.2	1.1	1.5	2.4	0.1	1.0	0.0	1.8	0.1	2.6	0.1	1.8	1.0	10.5	0.4	4.5	0.1	0.3	0.0	2.0	1.9	18.3	1.1	5.2
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	24.7	75.3	21.7	78.3	18.8	81.2	24.9	75.1	22.3	77.7	25.6	74.4	17.0	83.0	32.2	67.8	32.4	67.6	21.2	78.8	22.6	77.4	18.8	81.2	23.8	76.2
2.1. ժամկետանց	1.6	0.0	2.4	0.0	1.2	0.0	1.4	0.0	1.2	0.0	0.6	0.0	0.9	0.0	1.5	0.0	0.2	0.0	0.4	0.0	0.4	0.0	0.4	0.0	1.4	0.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	1.3	11.6	1.3	25.0	1.0	16.5	3.1	22.4	1.1	34.9	3.2	13.9	1.0	18.2	3.7	32.8	1.0	17.0	2.4	42.9	3.9	25.8	0.1	1.0	1.5	14.1
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	4.6	25.5	7.4	31.0	6.3	27.3	6.0	24.6	8.1	36.0	7.7	21.3	4.9	42.7	11.3	25.8	12.4	39.4	9.5	38.7	6.1	32.0	3.0	47.0	5.3	28.0
3. Ակտիվների քանակը	50.0	50.0	21.8	78.2	56.2	43.8	43.7	56.3	69.5	30.5	70.4	29.6	61.9	38.1	67.9	32.1	45.0	55.0	41.2	58.8	50.0	50.0	21.8	78.2	56.2	43.8
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	49.8	45.7	21.7	25.1	55.9	40.1	43.6	52.0	69.1	27.1	70.1	26.7	61.6	33.2	67.7	27.8	44.3	46.6	40.8	48.4	49.8	45.7	21.7	25.1	55.9	40.1
3.2. 5 001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.1	2.1	0.0	13.3	0.2	1.8	0.1	2.1	0.3	1.8	0.2	1.4	0.2	2.0	0.1	2.3	0.4	3.5	0.2	3.5	0.1	2.1	0.0	13.3	0.2	1.8
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.0	1.4	0.0	24.5	0.1	1.2	0.0	1.4	0.1	1.0	0.0	1.0	0.1	2.0	0.0	1.2	0.1	2.6	0.1	4.0	0.0	1.4	0.0	24.5	0.1	1.2
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.0	0.4	0.0	15.1	0.0	0.3	0.0	0.4	0.0	0.4	0.0	0.2	0.0	0.4	0.0	0.3	0.0	1.3	0.0	2.1	0.0	0.4	0.0	15.1	0.0	0.3
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.0	0.4	0.0	0.1	0.0	0.3	0.0	0.4	0.0	0.3	0.0	0.2	0.0	0.4	0.0	0.4	0.1	1.0	0.1	0.8	0.0	0.4	0.0	0.1	0.0	0.3

Հավելված 1.4

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային ճյուղային կառուցվածքն ըստ արժույթների (30.06.10թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԸՆԴԱՄԵՆԸ		ԷԼԵՆ		ԿԱՊԱՆ		ՄԱՐՏՈՒՆԻ		ՎԱՆԱՁՈՐ		ՉԱՐԵՆՑԱՎԱՆ		ԳԱՎԱՌ		ԵՂԵՎԱՐԴ		ՋԱԽԱՔԱՐ		ՍԵՎԱՆ		ԻՋԵՎԱՆ		ԴԻԼԻՋԱՆ	
	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո	ընդամենը	հարկերից հետո
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ																										
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	3.7	15.6	12.8	17.4	4.8	19.2	7.7	9.5	21.1	6.8	2.6	18.3	3.9	23.9	2.3	5.5	2.1	3.3	24.0	18.0	11.1	20.2	6.5	12.9	5.1	15.6
հանքագործական	0.1	3.7	0.7	5.7	0.9	0.0	0.6	3.9	1.5	2.2	0.5	1.7	0.5	5.2	7.6	1.7	0.2	0.0	0.2	0.0	21.3	40.7	0.2	0.4	1.0	4.5
էներգետիկա	5.9	23.8	0.6	0.0	0.0	6.0	6.0	1.4	46.1	14.5	4.0	12.3	1.5	27.1	1.7	55.3	7.7	56.9	13.9	35.4	7.8	16.4	2.5	58.9	5.9	22.1
սննդամթերք	5.2	25.2	34.3	36.6	7.5	38.6	32.6	29.5	6.5	4.1	2.8	65.2	7.3	8.8	5.3	4.7	12.3	3.1	42.5	5.5	4.7	7.2	23.4	0.9	9.8	24.8
թեթև	1.0	4.3	0.6	0.5	0.8	0.5	1.5	9.4	0.3	0.0	3.1	5.6	1.2	6.5	3.3	0.4	7.1	0.0	0.0	0.2	0.1	0.0	1.4	0.2	1.1	3.6
քիմիական	0.1	1.4	0.0	0.5	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.3	35.7	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.1	2.6
շինանյութերի	2.1	8.9	4.9	6.9	9.9	8.0	3.1	3.4	19.9	0.1	1.8	2.5	0.7	0.7	8.5	2.7	9.0	1.1	0.4	0.4	0.8	0.1	4.1	2.1	3.2	6.8
թանկարժեք իրեր	2.2	3.3	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.1	0.0	3.2	0.0	0.1	0.0	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	1.4	2.2
մետալուրգիա	0.0	4.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	3.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	0.3	1.2	0.0	0.1	0.1	0.9	0.2	0.3	0.2	0.0	0.0	0.0	0.6	0.0	1.5	3.4	0.0	0.0	0.1	0.1	0.0	0.1	0.0	0.0	0.2	0.8
արդյունաբերության այլ ճյուղեր	2.1	4.3	1.3	7.2	0.7	25.1	0.9	7.2	1.4	0.1	0.2	0.0	1.9	1.5	1.5	2.5	2.0	0.6	0.0	1.3	0.7	0.0	1.9	3.9	1.7	5.2
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	0.1	0.6	6.6	18.8	3.1	17.9	5.9	24.9	6.6	19.0	2.1	9.0	2.1	8.0	4.4	11.2	4.1	10.0	2.0	7.6	4.8	6.2	3.1	3.2	1.4	4.7
անասնապահություն	8.6	52.0	13.0	37.5	10.4	79.5	6.1	37.6	20.6	58.1	17.8	69.0	19.3	60.1	25.6	63.8	25.6	59.2	12.8	62.2	42.4	28.0	23.9	28.5	14.6	52.7
բուսաբուծություն	4.3	35.2	13.2	36.4	4.4	5.7	13.1	43.2	5.1	16.2	1.0	12.1	1.6	19.1	2.7	7.9	3.5	11.8	7.8	17.2	1.1	28.5	24.8	22.8	8.2	24.5
1.3. շինարարություն	2.0	6.7	1.2	0.2	2.5	1.9	0.5	3.6	0.4	0.2	2.1	8.3	1.4	5.2	0.9	0.2	2.7	3.1	4.7	0.3	1.6	3.4	2.2	12.5	1.9	6.0
1.4. տրանսպորտ և կապ	1.0	3.6	0.2	0.9	0.2	1.1	0.8	0.2	0.1	0.2	0.3	0.3	1.1	0.8	1.2	0.0	0.1	0.0	0.8	0.4	0.9	2.1	0.1	0.1	0.8	2.6
1.5. առևտուր, այդ թվում՝	5.2	18.6	7.1	5.7	5.3	9.4	6.1	4.9	6.6	6.4	7.6	5.9	9.7	5.4	11.7	3.0	9.6	9.2	2.9	9.1	8.5	7.4	5.0	3.2	5.8	14.4
մեծածախ առևտուր	9.5	50.4	13.4	29.5	9.8	44.8	11.2	15.6	7.4	17.9	5.6	8.8	18.9	17.2	16.6	6.5	2.9	38.6	0.8	67.0	20.8	25.1	10.2	10.5	9.9	44.8
մանրածախ առևտուր	12.4	27.7	42.0	15.1	26.2	19.2	44.3	28.9	43.2	31.5	50.5	35.0	45.5	18.4	62.8	14.1	48.0	10.5	23.3	8.9	32.8	21.3	50.6	28.8	18.8	26.5
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	1.4	3.2	0.5	1.0	1.4	4.0	1.3	1.6	1.1	0.6	2.4	1.0	2.8	2.6	3.7	2.6	4.5	8.4	2.6	3.1	1.4	0.8	1.2	1.8	1.5	2.9
1.7. ֆինանսական հատված	4.0	4.2	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.2	0.1	2.9	2.8
1.8. սպառողական վարկեր, այդ թվում	11.3	2.4	19.9	1.6	18.0	1.6	23.5	1.5	23.6	0.9	29.7	1.5	22.3	1.8	34.0	1.3	33.0	1.1	16.7	0.5	21.9	1.7	13.1	0.3	14.8	2.0
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	5.5	4.1	2.7	2.1	3.6	1.9	4.6	2.3	3.5	1.1	3.9	2.2	3.6	3.4	3.0	3.4	2.6	1.2	5.1	1.9	4.1	1.9	6.4	2.9	5.0	3.5
1.9. տնտեսության այլ ճյուղեր	1.6	5.1	0.6	0.7	1.4	2.4	0.7	0.5	0.6	1.3	0.8	1.9	1.1	0.9	10.0	1.5	3.9	1.1	0.0	0.3	0.6	1.3	3.2	17.0	1.6	4.7
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	35.8	64.2	51.6	48.4	40.5	59.5	51.0	49.0	63.5	36.5	51.5	48.5	48.1	51.9	71.2	28.8	62.5	37.5	58.8	41.2	55.0	45.0	45.9	54.1	40.9	59.1
2.1. ժամկետանց	0.4	1.2	1.8	0.6	0.3	1.0	1.1	0.3	0.2	1.0	0.2	0.4	0.5	0.4	0.3	1.2	0.1	0.1	0.4	0.1	0.2	0.2	0.4	0.1	0.5	0.9
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	6.0	7.0	14.1	12.1	7.4	10.1	14.3	11.1	19.3	16.7	8.4	8.6	10.6	8.6	22.9	13.7	11.0	6.9	23.9	21.4	19.7	10.0	0.9	0.2	7.8	7.8
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	9.5	20.6	19.2	19.1	13.4	20.2	14.4	16.2	27.4	16.7	18.4	10.6	20.7	26.9	29.3	7.9	28.8	22.9	33.7	14.5	21.5	16.6	18.7	31.3	12.9	20.3
3. Ակտիվների քանակը	87.3	12.7	68.8	31.2	82.4	17.6	68.8	31.2	91.5	8.5	85.4	14.6	79.0	21.0	84.2	15.8	87.8	12.2	80.8	19.2	87.1	12.9	93.4	6.6	83.6	16.4
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	81.2	9.1	66.0	29.6	79.2	15.7	66.0	29.5	39.0	7.9	82.7	13.3	75.8	19.7	81.4	14.7	85.5	11.4	77.9	16.9	83.8	11.7	86.7	4.1	75.1	14.1
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	2.6	0.9	1.6	0.8	1.7	0.7	1.5	0.8	13.1	0.3	1.5	0.6	1.7	0.5	1.5	0.5	1.3	0.3	1.6	0.6	2.0	0.5	3.3	0.7	3.0	0.7
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	2.1	1.0	0.7	0.5	1.0	0.6	1.0	0.5	24.3	0.2	0.8	0.4	1.0	0.4	0.8	0.2	0.7	0.3	0.9	1.2	0.9	0.4	1.9	0.8	3.4	0.7
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.8	0.7	0.2	0.2	0.3	0.2	0.2	0.1	15.1	0.1	0.2	0.1	0.3	0.1	0.3	0.1	0.2	0.1	0.3	0.2	0.2	0.1	0.9	0.5	1.8	0.3
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.6	1.0	0.2	0.2	0.3	0.3	0.1	0.2	0.0	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.6	0.5	0.3	0.5

Հավելված 1.5

Ընդհանուր վարկային ներդրումների և ավանդների ծավալների փոփոխությունը 30.09.2000-30.06.2011թթ. ժամանակահատվածում

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	652.8	212.6	556.1	1078.6	2358.9	813.8	176.2	105.5	82.3	4686.3	1929.3	2126.1	594.9
հանքագործական	100.0	4677.0	100.0	100.0	100.0	100.0	109226.2	100.0	100.0	100.0	1637.1	100.0	4380.6
էներգետիկա	237.8	-86.6	-20.5	496.7	100.0	86.9	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	325.1
սննդամթերք	2436.1	185.7	767.3	791.4	202.7	4354.8	1281.1	213.4	-68.0	2196.1	1560.7	666.5	943.4
թեթև	603.9	-47.4	7547.9	16061.3	-48.2	3504.0	3517.0	100.0	1.8	100.0	-68.4	78.2	565.1
քիմիական	45.0	171.0	100.0	100.0	0.0	0.0	6.2	-100.0	0.0	100.0	100.0	-47.5	19.4
շինանյութերի	7120.5	100.0	242475.9	100.0	31264.5	100.0	9285.5	100.0	100.0	100.0	1820.4	6317.8	9567.1
թանկարժեք իրեր	2307.4	-22.3	100.0	100.0	100.0	100.0	100.0	0.0	0.0	100.0	0.0	100.0	2371.2
մետալուրգիա	2020.8	0.0	-100.0	100.0	0.0	100.0	-100.0	0.0	0.0	0.0	-100.0	0.0	1484.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	205.2	100.0	-38.4	100.0	100.0	10.6	100.0	-87.2	100.0	100.0	100.0	0.0	66.1
արդյունաբերության այլ ճյուղեր	1513.5	100.0	3913.0	3753.6	100.0	-48.0	2583.6	-33.6	10700.8	100.0	4628.1	1758.7	1772.0
1.2. գյուղատնտեսություն	181.4	1493.9	1521.2	511.5	668.5	1137.7	566.9	2256.7	1965.8	872.9	1179.7	771.9	754.3
1.3. շինարարություն	6953.2	1209.1	738.0	1565.1	383.6	2494.1	2256.6	126818.0	100.0	1561.0	1185.8	2185.9	3869.8
1.4. տրանսպորտ և կապ	2119.2	18372.6	30000.4	1354.0	100.0	16667.7	100.0	100.0	100.0	100.0	100.0	5153.3	2322.5
1.5. առևտուր	1805.3	2553.3	2508.4	2850.6	58156.9	2901.0	1417.2	3969.2	36790.8	29879.9	99648.6	3605.7	1991.0
1.6. ֆինանսական հատված	736.2	0.0	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	780.5
1.7. սպառողական վարկեր (ներառյալ հիփոթեքային)	1008.3	6794.2	2766.8	8653.0	3516.6	6681.7	2947.5	2396.1	11918.9	5520.1	5133.8	8867.4	1482.7
1.8. տնտեսության այլ ճյուղեր	579.6	174.5	718.5	130.1	507.5	279.4	1093.1	566.4	1139.0	1393.3	388.2	9728.8	629.9
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	995.3	654.8	1140.4	976.4	1566.3	1511.5	590.5	993.0	1738.5	3195.4	2264.4	3290.5	1049.0
2.1. ժամկետանց	4.0	652.2	40.1	45.5	681.5	-68.3	54.5	1527.7	-58.5	96.5	86.6	56.1	13.6
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	1483.6	255.8	942.0	314.5	1095.9	1295.1	615.2	751.3	1049.0	5003.6	3102.9	28647.0	953.6
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	1373.1	1726.7	1692.2	737.3	5369.5	2539.5	2501.7	1395.4	1627.1	9152.2	4077.2	22639.6	1636.6

Ներգրավված միջոցներ													
Ֆիզիկական անձանցից	987.3	895.8	967.1	866.7	1197.9	579.0	750.2	1268.7	760.9	1537.0	1446.6	789.5	966.3
Իրավաբանական անձանցից	375.5	279.6	496.3	103.8	504.2	248.3	499.1	67.4	413.7	254.3	991.3	1012.1	386.1
Ընդամենը ներգրավված միջոցներ	631.7	612.9	724.6	282.6	912.5	450.0	654.3	589.5	656.8	631.2	1252.3	930.7	632.2

Հավելված 1.6

Ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումների և ավանդների ծավալների փոփոխությունը 30.09.2000-30.06.2011թթ. ժամանակահատվածում

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	790.1	217.1	603.8	1954.2	2827.6	879.0	180.7	991.9	140.0	4686.3	7555.4	2175.0	704.0
1.8. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	60079136	772261	3212849	2130048	715724	1147366	1421771	778489	222183	296956	680311	1245987	72703081
1.9. տնտեսության այլ ճյուղեր	38686510	496869	2522147	930258	465664	500312	853711	728043	378331	704185	209832	1106624	47582488
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	377044233	21115792	31598343	25794788	9578274	16593811	20969786	11368371	6182129	6067538	14407848	15761671	556482583
2.1. ժամկետանց	4363269	79056	244207	830376	75107	155036	561581	348181	23323	63444	66534	120969	6931082
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	33530104	3622394	3406317	5580314	1831850	3883930	4177457	2490819	1281372	1190558	1440700	23303	62459117
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	99018929	5610797	10147855	4902087	2276323	4424463	9026114	2729521	2261915	2316150	5352951	6767612	154834717
3. Վարկերի քանակը	183767	47059	42883	53655	24598	45637	54876	28569	17470	11491	17793	9470	537268
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	153506	45610	40179	51231	23609	43684	53242	27448	16895	10874	16260	7358	489896
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	9292	747	1292	1336	555	1131	893	686	388	375	889	557	18141
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	6702	416	760	687	252	557	436	279	122	160	479	454	11304
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3986	123	216	189	80	148	174	81	38	39	91	271	5436
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	10281	163	436	212	102	117	131	75	27	43	74	830	12491
4. Դուրս գրված ակտիվներ	6520090	115684	246839	126148	173940	270372	231065	64982	58415	20833	26724	195343	8050434
Ներգրավված միջոցներ													
Ֆիզիկական անձանցից	192644153	1727181	3407054	2873342	1489825	4872409	4983390	1798811	1162163	1225289	3160571	4809249	224153438
Իրավաբանական անձանցից	166373232	1475588	2847918	4723906	790689	2192663	1391049	1424726	861587	515392	6194228	18688973	207479951
Ընդամենը ներգրավված միջոցներ	359017385	3202769	6254973	7597248	2280514	7065072	6374439	3223536	2023750	1740682	9354799	23498222	431633389

Հավելված 1.21

Ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումների և ավանդների ծավալները 30.06.09թ. դրությամբ

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արտաշատի մասնաճյուղ	Կոտայքի մասնաճյուղ	Արմավիրի մասնաճյուղ	Արտաշատի մասնաճյուղ	Շիրակի մասնաճյուղ	Լոռու մասնաճյուղ	Գեղարքունիքի մասնաճյուղ	Տավուշի մասնաճյուղ	Վայոց ձորի մասնաճյուղ	Սյունիքի մասնաճյուղ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	56962135	3944149	6152509	1965192	1306191	1513932	6067661	4104215	381077	798233	6125866	4007516	93328675
հանքագործական	1895785	392400	3925	29562	58425	86322	53626	3541453	4400	0	5149062	31464	11246425
էներգետիկա	15683055	115640	6607	0	9002	478838	341309	0	20838	300912	644975	1024823	18625999
սննդամթերք	21139103	3171810	2850885	1396663	959653	225979	759974	400754	176481	406136	110155	1527771	33125364
թեթև	2389890	42818	299812	217343	53276	199360	219315	86909	23454	252	13669	136147	3682245
քիմիական	1016844	0	8715	0	2561	0	4321991	1659	0	0	14737	0	5366507
շինանյութերի	4240228	197891	1040274	54083	33364	454014	136605	39749	26807	10486	147860	190181	6571541
բանկարժեք իրեր	1448546	167	379519	5100	182399	0	6305	0	16391	301	0	30483	2069211
մետալուրգիա	400817	0	0	12602	0	12966	21609	94	0	0	30222	0	478310
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	2833768	15446	73713	7219	3733	42897	60259	14892	2440	37285	14665	12550	3118868
արդյունաբերության այլ ճյուղեր	5914100	7976	1489058	242620	3778	13556	146667	18704	110266	42860	520	1054097	9044205
1.2. գյուղատնտեսություն	2588463	8838275	5384543	8801145	4019643	3297915	5046822	2998171	1259074	1164436	1963316	1151656	46513460
1.3. շինարարություն	36908638	117375	576793	83752	11895	1314694	359567	74922	95703	32880	245195	3652630	43474042
1.4. տրանսպորտ և կապ	7559532	240727	629102	193635	37003	171725	318154	194567	18468	6205	462427	7336	9838883
1.5. առևտուր	103636000	2992038	4300757	3152317	1569840	3153448	3699656	1168214	873857	1139876	2621723	4535061	132842787
1.6. ֆինանսական հատված	23169184	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	23169184
1.7. սպառողական վարկեր	86118662	5516137	8086842	7228327	2917409	7676579	5884507	4325695	2290342	1911374	4243148	3529864	139728886
1.8. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	66571013	1149958	4331332	2946494	842954	1290604	1789926	982195	348013	344809	969777	2302364	83869437
1.9. տնտեսության այլ ճյուղեր	45939959	803173	3854802	1588412	400655	775833	1420894	762534	449157	597601	352528	2363989	59309538
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	429453586	23601834	33316679	25959274	11105589	19194730	24587188	14610512	5715691	5995413	16983980	21550416	632074891
2.1. ժամկետանց	18808594	479923	1599060	528192	462215	288074	519837	556595	328371	384234	859255	275940	25090289
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	36208983	8201570	4982536	8869618	3245763	5243224	6380000	3388535	2017271	1381419	3676624	57007	83652551
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	121027743	6093348	10238339	5647390	1989871	5735685	12397574	3458818	1771621	2285716	5146008	12943644	188735758
3. Վարկերի քանակը	159535	39456	30286	46665	23022	39023	42094	24259	16825	9437	20240	11860	462702
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	130226	38354	28010	44829	22356	37599	40617	23328	16407	8951	18756	9295	418728
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	9261	625	1057	1015	372	788	710	478	250	274	840	1767	17437
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	7321	254	764	548	172	406	439	252	98	133	413	414	11214
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3550	83	200	141	53	100	154	67	25	23	80	198	4674
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	9177	140	255	132	69	130	174	134	45	56	151	186	10649
4. Դուրս գրված ակտիվներ	9182037	184834	405772	301983	282067	754544	518230	1240571	39973	41329	215093	162996	13329429
Ներգրավված միջոցներ													
Ֆիզիկական անձանցից	224747768	2419421	5119776	3204988	2115751	5626928	5815660	2014697	1216446	1800854	3452093	6215235	263749617
Իրավաբանական անձանցից	191043223	1183104	2949009	4595136	582202	2348429	2370486	946980	722249	917801	3844280	21622558	233125457
Ընդամենը ներգրավված միջոցներ	415790991	3602525	8068785	7800124	2697953	7975357	8186146	2961677	1938696	2718656	7296373	27837793	496875075

Հավելված 1.22

Ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումների և ավանդների ծավալները 30.06.10թ. դրությամբ

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արտաշատ մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում	102288112	6051924	13104772	2831308	1265312	2789853	7861298	1237254	1465436	3068996	2065263	8046598	152076125
հանքագործական	13848026	330885	82871	87376	85329	167886	481379	97103	0	15000	300	66782	15262938
էներգետիկա	13740726	107264	548884	0	758424	1154926	933168	642147	1188564	2249726	1121108	1881227	24326164
սննդամթերք	36758439	4780483	7529643	1666484	47836	367699	1116257	302879	132964	725796	603983	2839256	56871719
թեթև	3551358	44362	383005	81994	23726	463117	291209	56523	7551	67	6544	98442	5007899
քիմիական	1230104	2522	4813	2500	7850	0	4422218	684	0	0	3158	0	5673848
շինանյութերի	14987199	621312	2288187	336700	63960	468379	253897	102066	38776	49530	71976	354945	19636929
բանկարժեք իրեր	3857884	8120	243517	11005	218613	1070	71476	0	9992	113	0	21340	4443130
մետալուրգիա	5476085	0	0	0	0	15136	0	0	0	0	191306	0	5682527
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	841187	71636	100440	71599	5554	30148	46291	4302	295	28454	7382	0	1207287
արդյունաբերության այլ ճյուղեր	7997104	85339	1923411	573651	54020	121492	245405	31549	87293	310	59506	2784605	13963685
1.2. գյուղատնտեսություն	3680313	8647814	6947121	11243253	3526791	2910332	3178586	2269564	1044379	1167009	1800103	2275169	48690434
1.3. շինարարություն	46136951	1162247	1244658	263122	55139	1698637	417572	101461	462866	57028	717892	6721751	59039323
1.4. տրանսպորտ և կապ	19266206	177285	881487	227117	33909	175715	468609	203515	5792	145019	329755	273948	22188356
1.5. առևտուր	129593032	4008925	6220505	3430248	2081459	4551694	4724459	1656966	1090719	899253	2858646	5325285	166441191
1.6. ֆինանսական հատված	31532475	0	84646	0	0	0	0	0	0	0	0	2169120	33786241
1.7. սպառողական վարկեր	80468052	6577531	8934298	8189645	3686416	10403460	6959005	4472489	2729602	2123044	3962585	5337583	143843709
1.8. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	65345871	1210102	3361312	2422567	811882	2138269	2007399	852472	282549	665615	938729	4031554	84068322
1.9. տնտեսության այլ ճյուղեր	63665870	1443266	3913863	1271845	331596	1709747	1542322	932054	427544	1055345	630381	4988537	81912371
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	541976882	29279094	44692661	29879104	11792505	26377707	27159249	11725775	7508887	9181308	13303354	39169545	792046071
2.1. ժամկետանց	6879676	146766	394679	142867	81996	81643	483321	262254	123416	54980	175508	170614	8997719
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	78979013	12542937	8179134	12247357	3762488	7229535	7447677	4460829	2106985	4338781	3651706	1608145	146554586
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	167395974	9335179	12717852	7737162	2609968	7426680	14350033	3844070	3103806	2433508	4305716	19105752	254365701
3. Վարկերի քանակը	185013	41290	38774	51892	21886	49680	38598	24694	16233	10596	18286	18668	515610
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	162291	39647	36336	49606	21147	47989	36763	23798	15815	10151	17373	16688	477604
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	8088	853	1165	1166	388	829	813	448	202	211	466	822	15451
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	7317	451	779	751	223	541	629	237	140	139	284	590	12081
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3601	177	256	220	73	163	210	150	46	55	78	285	5314
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	3716	162	238	149	55	158	183	61	30	40	85	283	5160
4. Դուրս գրված ակտիվներ	22058948	868789	1701066	767981	317117	424046	662106	1345874	298045	216661	744073	311370	29716076
Ներգրավված միջոցներ													
Ֆիզիկական անձանցից	294099523	3207282	7013589	4859153	2322248	7828492	7557772	3094246	1828570	2231410	4822089	7398320	346262694
Իրավաբանական անձանցից	196999961	1519231	5200282	7091756	647701	2084131	1594111	1138629	640655	1803939	19365690	29878505	267964592
Ընդամենը ներգրավված միջոցներ	491099484	4726513	12213871	11950909	2969950	9912624	9151883	4232876	2469225	4035349	24187779	37276825	614227286

Հավելված 1.23

Ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումների և ավանդների ծավալները 30.06.11թ. դրությամբ

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արմավիրի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում	142276518	13267044	14547612	7668327	5187243	9524801	10396441	1423577	601578	6033968	7361670	11391062	229679840
հանքագործական	5504388	838834	133633	344492	193395	206852	589268	132347	943	12232	4565919	65849	12588151
էներգետիկա	42229951	82963	874198	566852	3145178	1553651	2972082	811093	388861	2974245	1785162	6995809	64380046
սննդամթերք	43187916	9402571	6711831	4763986	547313	6480320	1676789	142406	92302	2894590	873944	2764023	79537992
թեթև	7610816	150580	188750	830044	13899	824864	799083	52496	42554	12214	6780	178683	10710765
քիմիական	2196125	72694	60664	738	0	0	3743501	0	0	385	5267	2100	6081475
շինանյութերի	15729699	1565859	2602840	499447	1035028	417042	150168	159197	60649	45448	67214	705956	23038545
բանկարժեք իրեր	7911647	4166	79946	9504	166588	12398	57168	0	0	574	0	12180	8254172
մետալուրգիա	6836993	0	0	1128	0	7102	0	0	0	0	0	0	6845222
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	2055495	19757	147010	32010	8000	885	62884	69017	68	11087	6698	0	2412910
արդյունաբերության այլ ճյուղեր	9013487	1129619	3748740	620125	77843	21688	345498	57019	16201	83194	50686	666462	15830561
1.2. գյուղատնտեսություն	4696874	11146644	12745915	13784452	4763493	5076011	3780583	2873248	1586413	1371921	2567923	3695224	68088700
1.3. շինարարություն	63739700	627559	2678708	1835176	118308	4763236	2470130	208145	657826	718309	1170530	8669700	87657329
1.4. տրանսպորտ և կապ	34088280	495435	807293	445349	62852	314898	728871	218585	6993	168233	706174	157598	38200561
1.5. առևտուր	175942925	5613472	8928398	4945860	2429314	6131539	5641113	2694767	2103514	1726245	3745560	4843835	224746540
1.6. ֆինանսական հատված	59734397	0	84071	0	0	0	0	0	0	0	0	3077870	62896339
1.7. սպառողական վարկեր	101291031	9442075	11890024	11153312	4562224	14224552	9032356	6473632	3814059	2473219	5565121	7892278	187813884
1.8. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	71292603	2086017	3278868	3098408	846416	2743229	2631614	1174060	429106	995858	1418968	5485906	95481054
1.9. տնտեսության այլ ճյուղեր	83588040	1213403	5626078	1791898	663877	2789549	2760438	3260618	1998224	859539	993351	13673584	119218598
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	736650367	43891649	60586967	44722782	18633727	45567814	37441547	18326633	11197713	14347293	23529296	58887057	1113782845
2.1. ժամկետանց	11878771	1038712	738859	616367	226450	267067	334633	280966	18433	63062	83567	257287	15802296
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	95390427	11511162	10584455	11392422	6713340	7763994	7177304	6694133	2013839	6502370	6999903	616911	173360259
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	221984798	16830128	20318906	13699527	8224313	13223591	17841246	6805739	5795818	6920169	8975169	29397091	370016495
3. Վարկերի քանակը	286991	54046	55026	65892	65931	63163	50874	30893	19453	12695	27755	26050	758769
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	259213	51627	52243	62933	30882	60641	48619	29701	18843	12039	26501	23661	676903
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	10024	1310	1307	1505	8822	1294	1123	637	313	281	684	1019	28319
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	9070	671	874	962	16166	778	706	329	202	268	348	721	31095
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	4268	224	295	246	9983	224	211	124	47	57	97	344	16120
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	4416	214	307	246	78	226	215	102	48	50	125	305	6332
4. Դուրս գրված ակտիվներ	16552107	1269236	2637610	672344	396521	519441	911480	1301434	254461	98589	937976	853984	26405183
Ներգրավված միջոցներ													
Ֆիզիկական անձանցից	390834768	5374472	9781764	7279974	3397497	11506826	7608667	5329147	2449473	2373292	6581154	10144241	462661276
Իրավաբանական անձանցից	237235086	1739708	5808608	5014587	1105465	3774950	3317060	848097	626190	1234835	3456122	22012139	286172846
Ընդամենը ներգրավված միջոցներ	628069853	7114180	15590372	12294561	4502962	15281776	10925727	6177244	3075663	3608127	10037276	32156380	748834122

Հավելված 2.1

Ընդհանուր ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Շիրակի մարզ	Սյունիքի մարզ	Վայոց ձորի մարզ	Տավուշի մարզ	ԼՂՀ	ԸՆԴԱՄԵՆԸ
Ֆիզիկական անձանցից	62.2	75.5	62.7	59.2	75.5	75.3	69.6	86.3	79.6	65.8	65.6	31.5	61.8
Իրավաբանական անձանցից	37.8	24.5	37.3	40.8	24.5	24.7	30.4	13.7	20.4	34.2	34.4	68.5	38.2
Ընդամենը ներգրավված միջոցներ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հավելված 2.2

Ընդհանուր ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Շիրակի մարզ	Սյունիքի մարզ	Վայոց ձորի մարզ	Տավուշի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	84.5	1.2	2.1	1.6	0.7	2.5	1.6	1.2	0.5	0.5	1.4	2.2	100.0
Իրավաբանական անձանցից	82.9	0.6	2.0	1.8	0.4	1.3	1.2	0.3	0.2	0.4	1.2	7.7	100.0
Ընդամենը մարզի ներգր. միջոցներ/ընդհանուր ներգր. միջոցներ	83.9	1.0	2.1	1.6	0.6	2.0	1.5	0.8	0.4	0.5	1.3	4.3	100.0

Հավելված 2.3

Ընդհանուր ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը ըստ ժամկետայնության (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Շիրակի մարզ	Սյունիքի մարզ	Վայոց ձորի մարզ	Տավուշի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ցպահանջ միջոցներ	37.9	42.3	47.9	32.2	39.2	27.3	38.1	26.6	38.1	44.5	44.8	25.7	37.4
Ժամկետային միջոցներ	62.1	57.7	52.1	67.8	60.8	72.7	61.9	73.4	61.9	55.5	55.2	74.3	62.6
Ընդամենը ներգրավված միջոցներ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հավելված 2.4

Ընդհանուր ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը ըստ դրամային և արտարժութային բացվածքի (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արտաշատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Դրամով ներգրավված միջոցներ	27.8	54.5	47.1	37.8	45.9	46.7	50.0	44.8	62.0	40.8	63.1	43.3	30.9
Արտարժույթով ներգրավված միջոցներ	72.2	45.5	52.9	62.2	54.1	53.3	50.0	55.2	38.0	59.2	36.9	56.7	69.1
Ընդամենը ներգրավված միջոցներ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հավելված 2.5

Ցպահանջ ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արտաշատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	42.4	42.3	36.7	38.9	43.8	42.9	32.1	50.0	51.4	25.1	29.6	37.5	41.7
Իրավաբանական անձանցից	57.6	57.7	63.3	61.1	56.2	57.1	67.9	50.0	48.6	74.9	70.4	62.5	58.3
Ընդամենը ներգրավված ցպահանջ միջոցներ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հավելված 2.6

Ցպահանջ ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արտաշատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	86.5	1.1	2.3	1.3	0.7	1.5	1.1	0.7	0.5	0.3	1.1	2.7	100.0
Իրավաբանական անձանցից	84.0	1.1	2.9	1.5	0.6	1.5	1.7	0.5	0.3	0.7	1.9	3.2	100.0
Ընդամենը մարզի ներգրավված ցպահանջ միջոցներ/ընդհանուր ներգրավված ցպահանջ միջոցներ	85.1	1.1	2.7	1.4	0.6	1.5	1.5	0.6	0.4	0.6	1.6	3.0	100.0

Հավելված 2.7

Ժամկետային ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	74.3	99.9	86.7	68.9	95.9	87.4	92.7	99.4	97.0	98.5	94.8	29.5	73.7
Իրավաբանական անձանցից	25.7	0.1	13.3	31.1	4.1	12.6	7.3	0.6	3.0	1.5	5.2	70.5	26.3
Ընդամենը ներգրավված ցպահանջ միջոցներ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հավելված 2.8

Ժամկետային ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	83.8	1.2	2.0	1.7	0.8	2.8	1.8	1.3	0.5	0.6	1.5	2.0	100.0
Իրավաբանական անձանցից	81.4	0.0	0.9	2.1	0.1	1.1	0.4	0.0	0.0	0.0	0.2	13.7	100.0
Ընդամենը մարզի ներգրավված ժամկետային միջոցներ/ընդհանուր ներգրավված ժամկետային միջոցներ	83.1	0.9	1.7	1.8	0.6	2.4	1.4	1.0	0.4	0.4	1.2	5.1	100.0

Հավելված 2.9

ՀՀ դրամով ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	48.1	64.5	46.4	57.4	57.9	55.2	66.5	75.8	69.2	64.4	62.4	51.0	50.4
Իրավաբանական անձանցից	51.9	35.5	53.6	42.6	42.1	44.8	33.5	24.2	30.8	35.6	37.6	49.0	49.6
Ընդամենը ՀՀ դրամով ներգրավված ցպահանջ միջոցներ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հավելված 2.10

ՀՀ դրամով ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Լոռու մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	71.9	2.1	2.9	2.3	1.0	3.4	3.1	1.8	1.1	0.8	3.4	6.1	100.0
Իրավաբանական անձանցից	78.9	1.2	3.4	1.7	0.8	2.8	1.6	0.6	0.5	0.5	2.1	5.9	100.0
Ընդամենը մարզի ՀՀ դրամով ներգրավված ժամկետային միջոցներ/ընդհ. ՀՀ դրամով ներգրավված ժամկետային միջոցներ	75.4	1.7	3.2	2.0	0.9	3.1	2.4	1.2	0.8	0.6	2.7	6.0	100.0

Հավելված 2.11

Արտարժույթով ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Լոռու մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	67.7	88.8	77.3	60.3	90.4	92.9	72.8	94.8	96.6	66.7	71.0	16.7	66.9
Իրավաբանական անձանցից	32.3	11.2	22.7	39.7	9.6	7.1	27.2	5.2	3.4	33.3	29.0	83.3	33.1
Ընդամենը արտարժույթով ներգրավված ցպահանջ միջոցներ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հավելված 2.12

Արտարժույթով ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.11թ.)

%

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Լոռու մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու ուռու	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	88.7	0.8	1.8	1.3	0.6	2.2	1.1	0.9	0.3	0.4	0.8	0.9	100.0
Իրավաբանական անձանցից	85.6	0.2	1.1	1.8	0.1	0.3	0.9	0.1	0.0	0.4	0.6	8.9	100.0
Ընդամենը մարզի ներգր. ժամկետային արտարժութային միջոցներ/ընդհանուր ներգր. ժամկետային արտարժ. միջոցներ	87.7	0.6	1.6	1.5	0.5	1.6	1.1	0.7	0.2	0.4	0.7	3.5	100.0

Հավելված 3

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.11թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2010 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1119.2	141.8	279.7	284.9	241.6	281.6	281.3	281.4	152.8	55.9	134.4	143.6	3398.2
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	32.9%	4.2%	8.2%	8.4%	7.1%	8.3%	8.3%	8.3%	4.5%	1.6%	4.0%	4.2%	100.0%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	561177	50171	55740	43154	18638	54268	38840	21952	20129	64546	74682	223930	220362
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	658194	309532	216614	156977	77126	161818	133102	65127	73283	256660	175069	410077	327757
Մասնաճյուղերի քանակը*	186	20	32	21	14	33	33	25	18	8	21	28	439
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	3376720	355709	487199	585455	321640	463084	331083	247090	170870	451016	477966	1148442	1705772
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	3960486	2194582	1893343	2129656	1330981	1380843	1134592	733065	622095	1793412	1120443	2103109	2537091

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.10թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2009 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1119.2	279.7	281.3	284.9	141.8	281.4	281.6	241.6	134.4	55.9	152.8	139.9	3394.5
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	438795	16899	43419	41948	20945	35226	32500	17520	18372	72189	158297	266453	180948
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	484254	104680	158879	104876	83163	93737	96446	48534	55870	164245	87064	279982	233332
Մասնաճյուղերի քանակը*	194	21	32	23	15	40	38	22	18	8	23	29	463
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	2531441	225072	381683	519605	197997	247816	240839	192403	137179	504419	1051643	1285408	1326625
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	2793695	1394243	1396646	1299091	786167	659443	714717	532990	417160	1147664	578407	1350674	1710683

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.09թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2008 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1113.4	277.9	279.4	283.2	141.2	281.0	281.3	240.7	134.0	55.8	152.8	137.7	3378.4
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	373443	12963	28879	27543	19107	28382	29101	12304	14468	48721	47751	202163	147074
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	385714	84929	119244	91664	78651	68309	87406	60700	42654	107445	111152	156503	187093
Մասնաճյուղերի քանակը*	172	17	29	21	14	32	32	19	16	7	17	27	403
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	2417389	211913	278234	371434	192711	249230	255817	155878	121168	388379	429198	1031029	1232941
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	2496823	1388343	1148851	1236156	793256	599835	768350	768974	357231	856488	999058	798164	1568424

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.08թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2007 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1108.7	277.1	278.3	282.1	140.6	280.7	281.7	240.1	134.1	55.7	152.8	137.7	3369.6
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	323818	11558	22476	26931	16220	25169	22628	13426	15091	31251	61223	170648	128096
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	340078	76203	113541	91438	68124	59116	74440	47348	46101	108932	94292	114464	165148
Մասնաճյուղերի քանակը*	171	15	28	17	14	31	31	19	16	7	17	23	389
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	2099517	213518	223392	446897	162894	227906	205627	169660	126484	248669	550282	1021662	1109597
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	2204937	1407719	1128512	1517340	684162	535284	676445	598335	386383	866791	847520	685290	1430546

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.07 թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Սյունիքի մարզ	Տավուշի մարզ	ՀՀ	Ընդամենը
Բնակչությունը (2006 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1105.3	275.6	276.8	280.6	140.0	280.8	282.1	239.6	134.1	55.8	152.8	137.7	3361.2
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	247623	8222	13509	21811	9932	18693	15138	7956	8871	24556	42083	127211	96735
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	189529	41127	58349	46351	42047	36901	38035	28768	27856	56985	37775	76884	91373
Մասնաճյուղերի քանակը*	136	15	24	17	12	28	29	16	11	7	14	18	327
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	2012481	151072	155808	360015	115877	187469	147260	119148	108141	195743	459302	973165	994332
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	1540342	755640	672958	765069	490548	370060	369991	430806	339588	454253	412288	588162	939215

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.06թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Սյունիքի մարզ	Տավուշի մարզ	ՀՀ	Ընդամենը
Բնակչությունը (2005 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1103.8	274.5	275.5	279.4	139.7	281.2	282.9	239.4	134.3	55.8	152.9	137.2	3356.6
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	201849	6872	10427	20371	6058	13209	11474	7383	7006	20847	45294	124751	80132
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	138464	25607	40168	32410	27401	27783	26491	18481	18581	29936	43698	79685	67129
Մասնաճյուղերի քանակը*	128	15	20	15	9	28	24	16	10	7	14	17	303
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1740631	125749	143635	379444	94028	132657	135244	110465	94090	166180	494672	1006810	887692
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	1194037	468616	553319	603682	425318	279019	312267	276517	249539	238630	477242	643104	743652

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.05 թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1102.8	273.7	274.6	278.4	139.3	281.3	283.4	239.2	134.4	55.8	153.0	137.0	3352.9
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	174265	5057	5919	14319	5107	10824	8200	5596	6332	5982	111152	45491	68901
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	97639	21884	27458	21632	23310	20045	23091	14081	11806	22785	23686	47703	47435
Մասնաճյուղերի քանակը*	115	13	22	13	8	20	21	15	9	7	12	16	271
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1671123	106461	73881	306651	88918	152237	110659	89239	94565	47685	1417182	389514	852460
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	936315	460736	342721	463268	405877	281929	311617	224551	176297	181629	301994	408458	586876

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.09.04թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2003 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1101.9	272.8	273.4	277.7	138.9	281.8	284.1	238.8	134.2	55.8	153.0	136.6	3362.4
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	145329	3955	5181	11776	4078	10777	6886	4993	6914	8019	22301	73976	56073
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	79071	14076	23889	18144	18285	14023	15904	7665	5556	11937	12805	37583	36993
Մասնաճյուղերի քանակը*	99	12	16	13	9	20	21	13	8	5	11	14	241
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1617553	89902	88529	251548	62933	151853	93163	91715	115984	89487	310190	792602	782320
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	880085	319986	408200	387583	282202	197578	215163	140807	93202	133214	178102	402672	516127

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.09.03թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2003 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1101.5	272.4	272.7	277.0	138.6	282.1	284.5	238.2	134.3	55.8	153.0	135.7	3210.1
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	34%	8%	8%	9%	4%	9%	9%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	132238	4151	6552	11208	5593	9124	5155	3867	4258	7204	9163	35370	51354
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	58397	13248	15232	12395	8818	9370	11802	4730	3907	10395	7726	35011	28399
Մասնաճյուղերի քանակը*	97	10	17	15	9	22	22	13	9	6	12	14	246
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1501656	113066	105104	206965	86134	116992	66660	70864	63532	66995	116827	361282	670134
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	663140	360885	244339	228893	135800	120152	152618	86659	58303	96674	98505	357617	370584

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.09.00թ.)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2000 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1248	311	329	323	168	362	394	279	157	69	164	134	3803
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	9%	8%	4%	10%	10%	7%	4%	2%	4%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	68799	3208	5740	9956	2650	7671	3679	3213	2597	7111	4523	22380	26888
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	53910	18691	14828	12872	6664	7807	13773	6014	3892	6273	6064	12459	25486
Մասնաճյուղերի քանակը*	78	11	16	11	8	14	20	14	7	6	14	12	211
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1100437	90723	118168	292159	55590	198459	72426	63991	58058	82245	53016	259985	484673
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	862278	528606	305281	377731	139781	201980	271117	119764	87012	72561	71081	144735	459400

** Գլխամասերը ներառված են:*

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԴԻՆԱՄԻԿ ՍՏՈԽԱՍՏԻԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ ԿՈՇՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐՈՎ *

Տնտեսական հետազոտությունների վարչություն

Գայանե Բարսեղյան

Աշխատանքում ընդլայնվել է ՀՀ տնտեսության համար կառուցված դրամավարկային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդելը՝ աշխատանքի շուկան դիտարկելով որպես անկատար մրցակցային շուկա (ենթադրվում է, որ աշխատաշուկայում մրցակցությունը մենաշնորհային է, իսկ աշխատավարձերը՝ կոշտ):

Ընդլայնված մոդելի կառուցվածքային գործակիցների գնահատումը ՀՀ տնտեսության համար իրականացվում է IRFM մեթոդով: Գործակիցների գնահատված արժեքների դեպքում ուսումնասիրվում են ընդլայնված մոդելի հատկությունները: Համեմատվում է միևնույն ցնցման ազդեցությունը մոդելի փոփոխականների վրա՝ կոշտ և ճկուն աշխատավարձերի պարագայում: Փոփոխականների ստանդարտ շեղումները համադրելով եզրակացվում է, որ կոշտ աշխատավարձերի պարագայում մոդելի անցումային դինամիկան էապես փոխվում է:

1. Ներածություն

Դրամավարկային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելները լայն կիրառություն են ստացել կենտրոնական բանկերի կողմից: Այդ մոդելներն օգտագործվում են կենտրոնական բանկի վարքագիծը տնտեսական իրավիճակի զարգացման տարբեր սցենարների դեպքում հետազոտելու համար: Քանի որ նման մոդելները դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հենքային մոդելներ են, ապա առանցքային է դառնում փաստացի տնտեսություններին բնորոշ առավել էական երևույթների արտացոլումը այդ մոդելների միջոցով:

ՀՀ տնտեսության համար ևս կառուցվել է դրամավարկային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդել [1], որտեղ աշխատանքի շուկան կատարյալ մրցակցային է (ֆիրմաները և տնային տնտեսություններն աշխատավարձերն ընդունում են որպես տրված մեծություն), իսկ աշխատավարձերը՝ ճկուն: Նպատակ ունենալով առավել իրատեսական դարձնել մոդելը՝ այն ընդլայնվել է [2]՝ ենթադրելով, որ մրցակցությունը աշխատանքի շուկայում մենաշնորհային է, իսկ աշխատավարձերը՝ կոշտ: Նման ենթադրությունների օբյեկտիվ պատճառն այն է, որ փաստացի տնտեսություններում աշխատանքային ծառայությունները տարբերակված են (մարդիկ միմյանցից տարբերվում են իրենց մասնագիտական կարողություններով), իսկ աշխատանքային պայմանագրերը ժամանակի յուրաքանչյուր պահի չեն ճշգրտվում փոփոխվող տնտեսական տեղեկատվությանը համապատասխան:

Այսպիսով՝ ենթադրում ենք, որ.

1. Աշխատաշուկայում մրցակցությունը մենաշնորհային է. տնտեսությունում կան բազմաթիվ տնային տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրը միայն մեկ մասնագիտացում ունի:
2. Աշխատավարձերը ճկուն չեն. դրանք անմիջապես չեն ճշգրտվում տնտեսական ցնցումներին համապատասխան:

Առաջին ենթադրությունը հանգեցնում է տնային տնտեսության վարքագծի օպտիմալացման փոփոխության՝ աշխատանքի շուկայում կատարյալ մրցակցային իրավիճակի համեմատ: Այժմ տնային տնտեսությունն առավելագույնի է հասցնում իր կենսաժամանակաշրջանի օգտակարության սպասվող արժեքը՝

---

* *Հեղինակը շնորհակալություն է հայտնում ՀՀ ԿԲ խորհրդի անդամ, տ.գ.թ. Ա. Մկրտչյանին՝ աշխատանքի վերաբերյալ արժեքավոր խորհուրդների համար և տնտեսական հետազոտությունների վարչության տնտեսագետ, տ.գ.թ. Կ. Պողոսյանին՝ ծրագրային փաթեթի տրամադրման համար:*

հաշվի առնելով ոչ միայն բյուջետային սահմանափակումը, այլև իր աշխատանքի նկատմամբ շուկայում ձևավորված պահանջարկի ֆունկցիան: Բացի այդ, եթե կատարյալ մրցակցային աշխատանքի շուկայի պարագայում աշխատողը առավելագույնի է հասցնում օգտակարությունը ըստ իր առաջարկած զբաղվածության մակարդակի (տրված աշխատավարձի դեպքում), ապա այժմ տնային տնտեսությունը մաքսիմալացումը կատարում է ըստ աշխատավարձի, որից հետո միայն, համաձայն իր աշխատանքային ռեսուրսի հանդեպ առկա պահանջարկի ֆունկցիայի, որոշում առաջարկվող զբաղվածության մակարդակը (օգտակարությունը առավելագույնի հասցնող աշխատավարձի պարագայում):

Երկրորդ ենթադրությունը աշխատավարձերի կոշտությունն է: Երևույթի մոդելավորման հայտնի եղանակ է գների կոշտությունների մոդելավորման Կալվոյի (1983) առաջարկած մեխանիզմը (այն արդեն օգտագործված է վերոնշյալ մոդելում [1]՝ ապրանքների գների կոշտությունները մոդելավորելիս): Նշված մեխանիզմը լայն տարածում ունի հատկապես ապրանքների գների կոշտությունները մոդելավորելիս. այն հնարավորություն է տալիս ֆիրմայի միկրոտնտեսական վարքագծի քննարկման միջոցով դուրս բերելու նորքեյնսյան Ֆիլիպսի կոր կոչվող առնչությունը: Սա, իհարկե, չի բացառում դրա այլընտրանքային կիրառությունը, մասնավորապես՝ աշխատավարձերի կոշտությունները մոդելավորելիս: Նման կիրառության կարելի է հանդիպել էրսեգ, Հենդերսոն, Լևին (2000) հեղինակային խմբի [3], իսկ ավելի ուշ՝ նաև Գալիի աշխատանքներում: Սույն աշխատանքում աշխատավարձերի կոշտությունները մոդելավորելիս նպատակահարմար է եղել օգտագործել հենց այս եղանակը՝ ելնելով այն հանգամանքից, որ նշված մոտեցումը թույլ է տալիս փոփոխականների միջև կապերը ստանալ տնտեսական գործակալի միկրովարքագծի քննարկման միջոցով: Բլանչարդը և Գալին [4] աշխատավարձերի կոշտությունը մոդելավորել են՝ ենթադրելով, որ այն նկարագրվում է մասնակի ճշգրտման մոդելով: Ակնհայտ է, որ այս եղանակի դեպքում ցուցանիշների միջև ստացված առնչությունը որևէ միկրոտնտեսական հիմք չունի և տնտեսական միավորի վարքագծի քննարկում չի ենթադրում:

Աշխատանքում նկարագրվում և մեկնաբանվում են ֆիրմաների և տնային տնտեսությունների վարքագծի փոփոխությունները, որից հետո ՀՀ տնտեսության համար գնահատվում են ընդլայնված մոդելի կառուցվածքային գործակիցները IRFM (Impulse Response Function Matching) մեթոդով: Համաձայն այդ մեթոդի՝ նախ փաստացի ժամանակային շարքերի օգտագործմամբ գնահատվում է VAR(1) մոդելը, որից հետո միևնույն ցնցման պարագայում համեմատվում են VAR(1) և DSGE մոդելների փոփոխականների արձագանքները (IRF-երը) և ընտրվում գործակիցների այն համակցությունը, որը նվազագույնի է հասցնում փորձառական և տեսական IRF-երի միջև հեռավորությունը[8]: Նման մոտեցման տրամաբանությունը հետևյալն է. քանի որ DSGE մոդելի լուծումն իրենից ներկայացնում է VAR(1), ուստի փաստացի տվյալներով գնահատված VAR(1) մոդելի հիման վրա ստացվող IRF-երը կառուցվածքային մոդելի (DSGE) գործակիցների վերաբերյալ տեղեկատվություն են պարունակում:

Գնահատման նշված մեթոդն առաջին անգամ օգտագործվել է Ռոտեմբերգի և Վուդֆորդի [5] կողմից և մեծ ուշադրության արժանացել ոլորտի մասնագետների կողմից: Պատճառը պարզ է. գործակիցների գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով մոդելի փոփոխականների արձագանքները (IRF-ը՝ Impulse Response Function), որն ուղղակիորեն ներկայացնում է այդ մոդելի դինամիկան, ինչն էլ, վերջին հաշվով, մակրոտնտեսագետների հետաքրքրության հիմնական առարկան է:

Աշխատանքի վերջում ներկայացվել են ընդլայնված դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելի գործակիցների գնահատված արժեքների պարագայում ուսումնասիրված մոդելի հատկությունները՝ դիտարկելով մոդելի դինամիկ վարքը տարբեր ցնցումներին արձագանքելու տեսանկյունից: Բացի այդ, քանի որ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմի վրա աշխատավարձերի կոշտության ունեցած ազդեցության ուսումնասիրությունը, ապա համապատասխան եզրահանգումներ կատարելու նպատակով դիտարկվում է մի դեպքում ճկուն, մյուս դեպքում՝ կոշտ աշխատավարձերի պարագայում միևնույն ցնցման ազդեցությունը մոդելի փոփոխականների վրա:

Այսպիսով՝ աշխատանքի առաջին մասում ներկայացվում է ֆիրմաների և տնային տնտեսությունների վարքը նոր ենթադրությունների պայմաններում[9], երկրորդ մասում նկարագրվում են մոդելի կառուցվածքային գործակիցների գնահատման մեթոդը և ստացված արդյունքները, իսկ երրորդ մասում դիտարկվում է տարաբնույթ տնտեսական ցնցումների պարագայում մոդելի դինամիկ վարքը՝ միաժամանակ կատարելով կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն:

---

[8] Նշված գործողությունները իրականացվել է MatLab միջավայրում գործող ծրագրային փաթեթով:

[9] Այն հավասարումներին, որոնց դուրսբերումը չի ներկայացվում և չի մեկնաբանվում դրանց տնտեսագիտական բովանդակությունը, կարելի է մանրամասն ծանոթանալ [1]-ում:

2. Մոդել. ֆիրմաների և տնային տնտեսությունների վարքը նոր ենթադրությունների պայմաններում

2.1. Ֆիրմաները, գործելով մենաշնորհային մրցակցային միջավայրում, արտադրում են տարբերակված ապրանքներ: Արտադրական միակ գործոնը աշխատուժն է:

2.2. Տնային տնտեսությունները սպառում են տարբերակված (ինչպես ներքին արտադրության, այնպես էլ ներմուծված) ապրանքներ և առաջարկում աշխատանքային առանձնահատուկ ծառայություններ՝ աշխատաշուկայում ձևավորելով մենաշնորհային մրցակցություն (սահմանում են աշխատավարձեր):

2.1. Ֆիրմաներ

Տնտեսությունում կան մենաշնորհային մրցակցային դաշտում գործող նմանատիպ բազմաթիվ ֆիրմաներ, որոնցից յուրաքանչյուրն արտադրում է տարբերակված ապրանք: i-րդ ֆիրման ($i \in [0,1]$) արտադրում է i-րդ ապրանքը հետևյալ արտադրական ֆունկցիայով.

$$Y_t(i) = A_t N_t(i), \qquad (1)$$

որտեղ $Y_t(i)$-ն i-րդ բարիքի արտադրության ծավալն է, իսկ A_t-ն՝ արտածին տեխնոլոգիական պարամետրը:

Նշենք, որ արտադրական ֆունկցիայի տեսքում [1]-ի համեմատությամբ փոփոխություն չկա, սակայն նոր ենթադրության պայմաններում $N_t(i)$-ն (i-րդ ֆիրմայի կողմից օգտագործվող աշխատուժ) արդեն տրվում է (2) տեսքով.

$$N_t(i) = \left[\int_0^1 N_t(i,j)^{1-\frac{1}{\varepsilon_w}} dj \right]^{\frac{\varepsilon_w}{\varepsilon_w - 1}} \qquad j \in [0,1], \qquad (2)$$

որտեղ $N_t(i,j)$-ն i-րդ ֆիրմայի կողմից t-ժամանակահատվածում վարձակալված j տեսակի աշխատուժի քանակությունն է (կամ աշխատած ժամանակը), իսկ ε_w-ն $(\varepsilon_w > 1)$՝ առանձին աշխատանքային ծառայությունների միջև փոխարինման առածգականությունը (աշխատուժի տարբերակվածության աստիճանը):

Երբ $\varepsilon_w \to \infty$, (2)-ը ստանում է $N_t(i) = \left[\int_0^1 N_t(i,j)\, dj \right]$ տեսքը: Այդ դեպքում աշխատանքային ծառայությունները դառնում են կատարելապես փոխարինելի, այլ խոսքով՝ տնային տնտեսությունները, առաջարկելով գրեթե նույն աշխատանքային ծառայությունը, աշխատանքի շուկայում մենաշնորհային ուժ չեն ունենում, և i-րդ ֆիրման արտադրանքը թողարկելիս (1)-ում օգտագործում է շուկայում ներկայացված բոլոր աշխատանքային ծառայությունները՝ առանց տարբերակման (միևնույն կշիռներով):

Աշխատավարձերը սահմանում են աշխատողները, իսկ ֆիրմաները՝ ընդունում որպես տրված մեծություն: Տրված աշխատավարձերի դեպքում ֆիրմաների ծախսերի մինիմալացման խնդիրը կլինի ($W_t(j)$-ով նշանակված է j ($j \in [0,1]$) տեսակի աշխատուժի դիմաց վարձատրությունը t-ժամանակահատվածում).

$$\min_{N_t(i,j)} F(N_t(i,j)) = \min_{N_t(i,j)} \int_0^1 W_t(j) N_t(i,j) dj$$

պայմանով, որ.

$$N_t(i) = \left[\int_0^1 N_t(i,j)^{1-\frac{1}{\varepsilon_w}} dj \right]^{\frac{\varepsilon_w}{\varepsilon_w - 1}}$$

Լուծելով ձևակերպված ծախսերի մինիմալացման խնդիրը (տրված աշխատավարձի պայմաններում)՝ կարելի է ստանալ j- րդ աշխատուժի նկատմամբ i-րդ ֆիրմայի կողմից ներկայացվող պահանջարկի ֆունկցիան.

$$N_t(i,j)=\left(\frac{W_t(j)}{W_t}\right)^{-\varepsilon_w} N_t(i)\text{, կամայական } i,j\in[0,1]\text{-ի համար} \qquad (3)$$

որտեղ ε_w-ն պահանջարկի առաձգականությունն է, իսկ W_t-ով նշանակված է ամբողջական աշխատավարձերի ինդեքսը՝ $W_t\equiv\left[\int_0^1 W_t(j)^{1-\varepsilon_w}dj\right]^{\frac{1}{1-\varepsilon_w}}$:

(3)-ն, ըստ էության, ներկայացնում է պահանջարկի օրենքը. այլ հավասար պայմաններում, j-րդ աշխատանքային ռեսուրսի վարձատրության աճը կրճատում է տվյալ ռեսուրսի հանդեպ i-րդ ֆիրմայի կողմից ներկայացվող պահանջարկը (երբ $W_t(j)\uparrow$, ապա $N_t(i,j)\downarrow$):

Այսպիսով, աշխատանքի շուկայում առաջարկվող աշխատանքային ծառայությունները տարբերակված են, արտադրության ընթացքում օգտագործվում են աշխատանքային բոլոր ծառայությունները, որոնց քանակը որոշվում է պահանջարկի ֆունկցիայի միջոցով՝ պայմանով, որ վարձատրությունը կոնկրետ աշխատանքային ծառայության դիմաց արդեն սահմանել է այն առաջարկող տնային տնտեսությունը:

2.2. Տնային տնտեսություններ

Տնտեսությունում կան բազմաթիվ միատեսակ տնային տնտեսությունները: Ներկայացուցչական j-րդ տնային տնտեսությունը ($j\in[0,1]$) առավելագույնի է հասցնում կենսաժամանակաշրջանի օգտակարության ֆունկցիայի ներկա արժեքը.

$$E_t\left\{\sum_{k=0}^{\infty}\beta^k U\big(C_{t+k}(j),N_{t+k}(j)\big)\right\}, \qquad (4)$$

որտեղ U-ն օգտակարության ֆունկցիան է, C_t-ն և N_t-ն՝ t պահին համապատասխանաբար սպառման ինդեքսը և աշխատուժի առաջարկը, իսկ β-ն $(0<\beta<1)$ զեղչադրույքն է:

Ենթադրվում է, որ սպառման աճը հանգեցնում է օգտակարության աճի, իսկ աշխատաժամանակի մեծացումը՝ ընդհակառակը՝ կրճատում $(U'_C>0, U'_N<0)$: Բացի այդ, ենթադրվում է, որ օգտակարության ֆունկցիան գոգավոր է. երկրորդ կարգի ածանցյալներից բաղկացած Հեսսի մատրիցը բացասական որոշյալ է ($U(\cdot)$-ն կրկնակի դիֆերենցելի է, իսկ 2-րդ կարգի մասնակի ածանցյալներն անընդհատ են):

Ներկայացուցչական տնային տնտեսությունը, երբ մրցակցությունը աշխատաշուկայում կատարյալ է, *իսկ աշխատավարձերը՝ ճկուն,* ձգտում է առավելագույնի հասցնել (4)-ը՝ պայմանով, որ տեղի ունի բյուջետային սահմանափակում.

$$P_{t+k}C_{t+k}+E_{t+k}\left\{Q_{t+k,t+k+1}D_{t+k+1}\right\}\le D_{t+k}+W_tN_{t+k}+T_{t+k},$$

որտեղ P_{t+k}-ն ընդհանուր գների ինդեքսն է, $Q_{t+k,t+k+1}$-ը $t+k+1$ ժամանակահատվածի պորտֆելի անվանական արժեքը $t+k$ պահի ներկա արժեքով արտահայտելու գործակիցն է, D_{t+k}-ն տնային տնտեսության ներդրումային պորտֆելի անվանական արժեքն է $t+k$ պահին [ներառյալ $(t+k)$ պահին ստացվող տոկոսավճարները], իսկ T_{t+k}-ն՝ կառավարության կողմից տրվող միանգամյա զուտ հատկացումներն են:

Մաքսիմումի անհրաժեշտ (բավարար պայմանը տեղի ունի օգտակարության ֆունկցիայի գոգավորության վերաբերյալ արված ենթադրության շնորհիվ) պայմանն է.

$$\begin{cases}\dfrac{U'_{C_t}}{P_t}=\beta(1+i_t)E_t\left\{\dfrac{U'_{C_{t+1}}}{P_{t+1}}\right\} & (5.1)\\[2ex] -\dfrac{U'_{N_t}}{U'_{C_t}}=\dfrac{W_t}{P_t} & (5.2)\end{cases} \qquad (5)$$

Ներկայացվեց կատարյալ մրցակցության դեպքում տնային տնտեսության վարքագիծը (տե՛ս [1]): Հոդվածում արված ենթադրությունները փոփոխություններ են մտցնում ինչպես նկարագրված խնդրի

դրվածքում, այնպես էլ ստացվող արդյունքներում: [1]-ի համեմատ տարբերությունը հետևյալ ենթադրություններն են.

1. j-րդ տնային տնտեսությունը մասնագիտացած է j աշխատանքի մեջ ($j \in [0,1]$): Յուրաքանչյուր տնային տնտեսություն աշխատաշուկայում ունի մենաշնորհային ուժ, որի առկայությունը հնարավորություն է տալիս աշխատանքային պայմանագիր կնքելիս սահմանել անվանական աշխատավարձերի իր համար ընդունելի մակարդակ:
2. Աշխատավարձերի ճշգրտման հաճախության վրա դրված է Կալվոյի սահմանափակում: Այդ դեպքում առանձին վերցրած յուրաքանչյուր տնային տնտեսություն միշտ չէ, որ ունենում է աշխատավարձերի սահմանման հնարավորություն, իսկ նման հնարավորություն ունենալու հավանականությունը $(1-\theta_w)$ է (θ_w-ն ժամանակի յուրաքանչյուր պահի ցույց է տալիս աշխատավարձերը չճշգրտող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ):

Առաջին ենթադրության ավելացումը տնային տնտեսության խնդրում փոփոխություն է առաջացնում. օգտակարության մաքսիմալացումը կատարվում է՝ հաշվի առնելով ոչ միայն բյուջետային սահմանափակումը, այլև իր աշխատուժ ռեսուրսի նկատմամբ շուկայում առկա պահանջարկը (մենաշնորհային մրցակցություն).

$$\max_{C_t, W_t^*, D_{t+1}} E_t \left\{ \sum_{k=0}^{\infty} \beta^k U\left(C_{t+k}(j), N_{t+k}(j)\right) \right\}$$

$$P_{t+k} C_{t+k}(j) + E_{t+k}\left\{ Q_{t+k,t+k+1} D_{t+k+1} \right\} \le D_{t+k} + W_t^* N_{t+k}(j) + T_{t+k}$$

$$N_{t+k}(j) = \left(\frac{W_t^*}{W_{t+k}} \right)^{-\varepsilon_w} N_{t+k} \quad k = 0,1,2,\ldots$$

Մաքսիմալացումը կատարվում է ըստ C_t, W_t^*, D_{t+1} փոփոխականների: Սա աշխատանքի շուկայում մենաշնորհային մրցակցության և *ճկուն աշխատավարձերի դեպքն* է: Ձևակերպված խնդրի լուծման պարագայում կարելի է համոզվել, որ մաքսիմումի անհրաժեշտ պայմաններից՝ էյլերի հավասարումը պահպանվում է (5.1), սակայն փոխվում է սպառման և աշխատուժի փոխարինման ներժամանակային պայմանը (5.2)՝ հանգեցնելով աշխատավարձերի մակարդակում հավելադրի առաջացման

$$\frac{W_t^*}{P_t} = -\mathrm{M}_w \frac{U'_{N_t}}{U'_{C_t}} \equiv \mathrm{M}_w \, MRS_t \,, \qquad (6)$$

որտեղ $\mathrm{M}_w \equiv \dfrac{\varepsilon_w}{\varepsilon_w - 1}$ *-ը աշխատավարձերի հավելադիրն է: Հավելադրի առաջացումը մենաշնորհային մրցակցային միջավայրին բնորոշ հատկություն է (ավելի բարձր գին, ավելի ցածր քանակություն):*

Երբ մրցակցությունը մենաշնորհային է, իսկ աշխատավարձերը՝ կոշտ (տեղի ունեն միաժամանակ 1-ին և 2-րդ ենթադրությունները), ապա խնդրի լուծման անհրաժեշտ պայմաններից մեկը՝ սպառման որոշման էյլերի միջժամանակային պայմանը (5.1), կրկին պահպանվում է, սակայն աշխատավարձերի որոշման խնդիրը մի փոքր փոխվում է: Այդ դեպքում որոնվում է.

$$\max_{W_t^*} E_t \left\{ \sum_{k=0}^{\infty} (\beta\theta_w)^k U(C_{t+k|t}, N_{t+k|t}) \right\} \,, \qquad (7)$$

պայմանով, որ.

$$P_{t+k} C_{t+k|t} + E_{t+k}\left\{ Q_{t+k,t+k+1} D_{t+k+1|t} \right\} \le D_{t+k|t} + W_t^* N_{t+k|t} + T_{t+k}$$

$$N_{t+k|t} = \left(\frac{W_t^*}{W_{t+k}} \right)^{-\varepsilon_w} N_{t+k} \quad k = 0,\ 1,\ 2,\ldots$$

որտեղ $C_{t+k|t}$ *և* $N_{t+k|t}$ *-ն համապատասխանաբար այն տնային տնտեսության սպառումը և աշխատուժի առաջարկն են* $(t+k)$ *պահին, որը վերջին անգամ ճշգրտել է աշխատավարձերը* t *պահին (գրառումների պարզության նպատակով այստեղ և այսուհետև անտեսում ենք տնային տնտեսությունը ցույց տվող* j *համարը):*

$N_{t+k} \equiv \int_0^1 N_{t+k}(i)\,di$ *-ով նշանակված է ամբողջական զբաղվածությունը* $(t+k)$ *պահին,* $D_{t+k|t}$ *-ն* $(t+k)$ *պահին տնային տնտեսության ներդրումային պորտֆելի անվանական արժեքն է՝ ձեռք բերված տվյալ ժամանակահատվածի սկզբին այն տնային տնտեսության կողմից, որը վերջին անգամ ճշգրտել է իր աշխատավարձերը* t *պահին, իսկ* $E_{t+k}\left\{Q_{t+k,t+k+1}D_{t+k+1|t}\right\}$*-ն* $(t+k+1)$ *պահին* $D_{t+k+1|t}$ *պատահական եկամուտ բերող պորտֆելի շուկայական արժեքն է* $(t+k)$ *պահին:*

Հարկ է նշել, որ ձևակերպված խնդիրը՝ (7), լուծում են ոչ բոլոր տնային տնտեսությունները, այլ միայն նրանք, որոնք դիտարկվող t պահին ունեն աշխատավարձերի ճշգրտման հնարավորություն: Ընդ որում, աշխատավարձի մակարդակը սահմանվում է այնպես, որ մաքսիմալացվի սպասվող օգտակարության ներկա արժեքը, որը տնային տնտեսությունը ստանում է, երբ աշխատավարձերը մնում են անփոփոխ՝ պահպանվելով W_t^*-մակարդակում՝ սահմանված ընթացիկ ժամանակահատվածում: $(t+k)$ պահին տնային տնտեսության սպասվող օգտակարությունը այն պայմանով, որ տնային տնտեսությունը $[t,t+k]$ հատվածում աշխատավարձերը ճշգրտելու այլ հնարավորություն չի ունեցել (հավանականությունն է θ_w^k), կլինի $\theta_w^k U(C_{t+k|t}, N_{t+k|t})$, իսկ այդ օգտակարության ներկա արժեքն է $(\beta\theta_w)^k U(C_{t+k|t}, N_{t+k|t})$, ուստի տնային տնտեսության կենսաժամանակաշրջանի սպասվող օգտակարության ներկա արժեքը կլինի $E_t\left\{\sum_{k=0}^{\infty}(\beta\theta_w)^k U(C_{t+k|t}, N_{t+k|t})\right\}$, որն աշխատավարձերի օպտիմալ մակարդակ ընտրելիս մաքսիմալացվում է այն պայմանով, որ տեղի ունենա բյուջետային սահմանափակումը և տվյալ աշխատանքային ռեսուրսի նկատմամբ պահանջարկի հավասարումը:

(7) խնդրի մաքսիմումի անհրաժեշտ պայմանը կլինի.

$$E_t\left\{\sum_{k=0}^{\infty}(\beta\theta_w)^k N_{t+k|t}U'_C(C_{t+k|t}, N_{t+k|t})\left(\frac{W_t^*}{P_{t+k}} - \mathrm{M}_w\, MRS_{t+k|t}\right)\right\} = 0, \qquad (8)$$

որտեղ $\mathrm{M}_w = \dfrac{\varepsilon_w}{\varepsilon_w - 1}$*, իսկ* $MRS_{t+k|t} \equiv -\dfrac{U'_N(C_{t+k|t}, N_{t+k|t})}{U'_C(C_{t+k|t}, N_{t+k|t})}$ *փոխարինման սահմանային նորմն է:*

Նկատենք, որ սահմանային դեպքում, երբ աշխատավարձերը ճկուն են ($\theta_w = 0$) կամայական t-ի համար, (8)-ի փոխարեն կունենանք հետևյալ առնչությունը՝ $\dfrac{W_t^*}{P_t} = \dfrac{W_t}{P_t} = \mathrm{M}_w\, MRS_{t|t}$, որը համապատասխանում է ճկուն աշխատավարձերով մենաշնորհային մրցակցության դեպքի համար արդեն իսկ ներկայացված առնչությանը (6): M_w-ն մենաշնորհային մրցակցության պայմաններում աշխատավարձերի հավելադիրն է, ընդ որում, երբ $\lim_{\varepsilon_w \to \infty} \mathrm{M}_w = 1$, ապա $\dfrac{W_t}{P_t} = MRS_{t|t}$, այսինքն՝ երբ $\varepsilon_w \to \infty$, աշխատանքային ծառայությունները դառնում են կատարելապես փոխարինելի, և պահպանվում է աշխատանքի շուկայում կատարյալ մրցակցության դեպքում ստացված առնչությունը (5.2):

(8)-ը լոգարիթմելով և գծայնացնելով կայուն վիճակի շուրջ ($\dfrac{W^*}{P} = \dfrac{W}{P} = \mathrm{M}_w\, MRS$)՝ կստանանք հետևյալ արտահայտությունը.

$$w_t^* = (1-\beta\theta_w)\sum_{k=0}^{\infty}(\beta\theta_w)^k E_t\left\{mrs_{t+k|t} + p_{t+k}\right\} \qquad (9)$$

(9) բանաձևից երևում է, որ w_t^*-ը աճում է՝

- ✓ *Երբ աճում են սպասվող ապագա գները:* t պահին աշխատավարձ սահմանող տնային տնտեսությունը, ունենալով ապագային միտված վարքագիծ, մտածում է իր անվանական աշխատավարձի ներկա և ապագա գնողունակության մասին և, ընթացիկ պահին ունենալով աշխա-

տավարձերի ճշգրտման հնարավորություն, սահմանում է աշխատավարձերի ավելի բարձր մակարդակ:

- ✓ *Երբ աճում է սպասվող փոխարինման սահմանային ծորմը:* Այդ աճն իր հերթին նշանակում է սպառման մակարդակի ավելի մեծ կրճատում՝ հօգուտ աշխատաժամանակի միավոր աճի, և բնական է, որ նման «զոհողության» համար աշխատողը կպահանջի ավելի բարձր աշխատավարձ:

2.2.1. Աշխատավարձերի ինդեքսի դինամիկա: Աշխատավարձերի ճշգրտման հաճախության վրա դրված Կալվոյի սահմանափակման դեպքում աշխատավարձերի ինդեքսի դինամիկան տրվում է $w_t \approx \theta_w w_{t-1} + (1-\theta_w) w_t^*$ առնչությամբ [12]: Այսպիսով, աշխատավարձերի ինդեքսը t պահին հավասար է նախորդ ժամանակահատվածից փոխանցված ինդեքսի և նոր սահմանված գների մակարդակի կշռված միջինին, ընդ որում, w_{t-1}-ը կշռվում է θ_w գործակցով, իսկ w_t^*-ը՝ $(1-\theta_w)$-ով, քանի որ աշխատավարձը չի ճշգրտում բնակչության θ_w մասը, ճշգրտում է $(1-\theta_w)$ մասը:

2.2.2. Աշխատավարձերի Ֆիլիպսի կոր: (9) հավասարման մեջ կատարելով որոշ ձևափոխություններ և օգտվելով աշխատավարձերի դինամիկայի հավասարումից, ինչպես նաև ընդունելով, որ $\pi_t^w = w_t - w_{t-1}$, կստանանք ստորև բերվող առնչությունը, որը հայտնի է որպես աշխատավարձերի նորքեյնսյան Ֆիլիպսի կոր:

$$\pi_t^w = \beta E_t \pi_{t+1}^w - \lambda_w \mu_t^w,\ (\lambda_w \equiv \frac{(1-\beta\theta_w)(1-\theta_w)}{\theta_w(1+\varepsilon_w \varphi)}, \mu_t^w = \ln\left(\frac{\mathrm{M}_{w,t}}{\mathrm{M}_w}\right) \approx \frac{\mathrm{M}_{w,t} - \mathrm{M}_w}{\mathrm{M}_w}), \qquad (10)$$

որտեղ M_w-ն կայուն վիճակում աշխատաշուկայում աշխատավարձերի կոշտության բացակայության դեպքում մենաշնորհային մրցակցության հետևանքով ձևավորված հավելադիրն է, իսկ $\mathrm{M}_{w,t}$ հավելադիրը աշխատավարձերի կոշտության հետևանքն է:

λ_w գործակիցը ցույց է տալիս π_t^w-ի (աշխատավարձերի հավելաճի տեմպի) զգայունությունը աշխատավարձերի հավելադրի շեղման նկատմամբ: Պարզ է, որ λ_w-ի մեծ արժեքը նշանակում է, որ աշխատավարձերն արագ են արձագանքում հավելադրի՝ կայուն վիճակից շեղմանը (երբ որևէ ցնցման հետևանքով աշխատավարձերի հավելադիրը փոխվում է՝ $\mu_t^w \neq 0$, ապա աշխատավարձերը բավականին արագ ճշգրտվում են՝ զրոյացնելով հավելադրի շեղումը): Նկատենք, որ λ_w-ն նվազող է ըստ այն կազմող բոլոր պարամետրերի՝ $\theta_w, \beta, \varepsilon_w, \varphi$: Մասնավորապես, θ_w-ի աճի դեպքում (կոշտ աշխատավարձերով մոդել) տնային տնտեսությունը աշխատավարձերը ճշգրտելու հնարավորություն ստանում է ավելի քիչ հաճախությամբ. սա մեծացնում է աշխատավարձերի կոշտությունը և հանգեցնում աշխատավարձերի դանդաղ արձագանքին՝ ի պատասխան հավելադրի շեղմանը (λ_w-ն նվազում է): Ծայրահեղ դեպքում՝ $\theta_w = 1 \Rightarrow \lambda_w = 0$. կայուն վիճակից հավելադրի շեղումը որևէ կերպ չի ազդում π_t^w-ի վրա:

θ_w-ի փոքր արժեքների դեպքում ունենում ենք ճկուն աշխատավարձերով մոդել, որտեղ աշխատավարձերը բավականին արագ են արձագանքում հավելադրի շեղմանը: Ծայրահեղ դեպքում՝ $\theta_w \to 0 \Rightarrow \lambda_w \to \infty$. աշխատավարձերն ակնթարթորեն ճշգրտվում են հավելադրի շեղմանը համապատասխան:

3. Մոդելի գնահատում

3.1. Օգտագործված տվյալներ

Գնահատումն իրականացվել է 2000-2010 թթ. եռամսյակային տվյալների օգտագործմամբ[10]: Մոդելի փոփոխականները կառուցվել են՝ փաստացի ժամանակային շարքերը լոգարիթմելով և հաշվարկելով շեղումները համապատասխան երկարաժամկետ միտումներից[11]:

[10] *Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ և ԱՎԾ:*
[11] *Ժամանակային շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է Tramo/Seats հարթեցման եղանակով:*

3.2. Գնահատման մեթոդ և ստացված արդյունքներ

Մինչ գնահատման մեթոդի նկարագրությանը անդրադառնալը, նախ անհրաժեշտ է լուծել կառուցված մոդելը: Ստորև նկարագրվում է մոդելի ռացիոնալ սպասումներով լուծումը՝ հիմք ընդունելով Չոյի և Մորենոյի [13] աշխատանքը: Այսպիսով, մոդելի հավասարումների համակարգը մատրիցային տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$B_{11}X_t = A_{11}E_t(X_{t+1}) + B_{12}X_{t-1} + \varepsilon_t \;\; \varepsilon_t \sim N(0, D) \tag{11}$$

որտեղ B_{11}, A_{11}, B_{12}-ը կառուցվածքային գործակիցների մատրիցներն են, ε_t-ն՝ սխալների վեկտորը, իսկ D-ն՝ ցրվածքի (դիսպերսիայի) անկյունագծային մատրիցը (ընդլայնված մոդելի ներկայացումը (11) տեսքով տե՛ս Հավելված 2):

Համակարգի լուծումը տրվում է հետևյալ տեսքով (անորոշ գործակիցների մոտեցում).

$$X_{t+1} = \Omega X_t + \Gamma \varepsilon_{t+1} \tag{12}$$

Տեղադրելով (12) հավասարումը (11)-ի մեջ՝ կստանանք.

$$B_{11}X_t = A_{11}E_t(\Omega X_t + \Gamma \varepsilon_{t+1}) + B_{12}X_{t-1} + \varepsilon_t = A_{11}\Omega X_t + B_{12}X_{t-1} + \varepsilon_t$$

որտեղից էլ՝

$$X_t = (B_{11} - A_{11}\Omega)^{-1}B_{12}X_{t-1} + (B_{11} - A_{11}\Omega)^{-1}\varepsilon_t \tag{13}$$

ենթադրվում է, որ գոյություն ունի $(B_{11} - A_{11}\Omega)$ մատրիցի հակադարձը:

(12) և (13) հավասարումներից կունենանք.

$$X_t = \Omega X_{t-1} + \Gamma \varepsilon_t \tag{14}$$

որտեղ՝ $\Omega = (B_{11} - A_{11}\Omega)^{-1}B_{12}$

$$\Gamma = (B_{11} - A_{11}\Omega)^{-1}$$

Ուստի DSGE մոդելը կարելի է ներկայացնել VAR(1) տեսքով (14) և, ունենալով X_t վեկտորի բոլոր բաղադրիչները, կարելի է այն գնահատել նվազագույն քառակուսիների եղանակով:

Այժմ անդրադառնանք մոդելի կառուցվածքային գործակիցների գնահատման IRFM (Impulse Response Function Matching) մեթոդին: Ըստ այս մեթոդի՝ նախ փաստացի ժամանակային շարքերի օգտագործմամբ գնահատվում է վեկտորական ավտոռեգրեսիոն մոդել VAR(1), որից հետո անհայտ պարամետրերի համար ստացված գնահատականների պարագայում հաշվարկվում է տարբեր ցնցումների դեպքում մոդելի փոփոխականների արձագանքը (Impulse Responses of Data, IR_{Data}):

Հաջորդ քայլին նույնանուն ցնցումների դեպքում հաշվարկվում է DSGE մոդելի փոփոխականների դինամիկ արձագանքը (Impulse Responses of DSGE model, IR_{Model}), որը ձևավորվում է մոդելի գործակիցների բազմաթիվ արժեքների պարագայում՝ ընտրված թույլատրելի արժեքների բազմությունից: Գործակիցների այն արժեքները, որոնք ապահովում են IR_{Model}-ի ամենամոտ արդյունքը փաստացի տվյալների միջոցով ստացված IR_{Data}-ի հետ համեմատելիս, ընդունվում են որպես համապատասխան գործակիցների գնահատականներ:

Այսպիսով, նվազագույնի է հասցվում ընտրանքային և տեսական IR-երի (Impulse Responses) միջև հեռավորությունը՝ $\sum(IR_{Data} - IR_{Model})^2$:

Նշված գործընթացը գրականությունում հայտնի է որպես IRFM (Impulse Response Function Matching) գնահատում: Նկատենք, որ փաստացի տվյալների հիման վրա գնահատելով ավելի բարձր կարգի վեկտորական ավտոռեգրեսիոն մոդել՝ միաձնշանակ կարելի է ստանալ առավել լավ արդյունքներ, սակայն քանի որ այնուհետև համեմատություն է արվում DSGE մոդելի և գնահատված վեկտորական

ավտոռեգրեսիոն մոդելի փոփոխականների արձագանքների միջև (IR-երի միջև), ապա համադրելիության ապահովման նպատակով անհրաժեշտ է գնահատել VAR(1) մոդել:

Այսպիսով, նկարագրված մեթոդով իրականացվել է մոդելի կառուցվածքային գործակիցների գնահատում: Հիմք ընդունելով Հոլի [14] աշխատանքը՝ մոդելի գործակիցները տրոհվել են երկու խմբի, որոնցից մեկը ներկայացնում է IRFM մեթոդով գնահատվող, իսկ մյուսը՝ այդ գործընթացում հաստատուն պահվող գործակիցների խումբը:

Նշենք, որ հաստատուն պահվող գործակիցների խմբում ընդգրկված են այնպիսի գործակիցներ, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր փոփոխականների տեսակարար կշիռներ (ուստի հեշտ հաշվարկելի են փաստացի վիճակագրության հիման վրա) և ավտոռեգրեսիոն գործընթացները նկարագրող գործակիցներ (գնահատվել են առանձին ռեգրեսիոն վերլուծության հիման վրա): ***Գործակիցների տվյալ խմբի համար ստացվել են հետևյալ արժեքները.***

$$\beta = 0.99 \quad k_1 = 0.575 \quad a^* = 0.73 \quad \rho_{y^*} = 0.75 \quad \rho_{\xi} = 0.75$$
$$\gamma_{\psi} = 0.25 \quad k_2 = 0.075 \quad a = 0.73 \quad \rho_{i^*} = 0.82 \quad \rho_{gov} = 0.63$$
$$\gamma = 0.3 \quad k_3 = 0.15 \quad \rho_{\pi^*} = 0.75 \quad \rho_a = 0.84$$

Մոդելի կառուցվածքային գործակիցների մյուս խմբի գնահատումը IRFM մեթոդով իրականացվել է MatLab միջավայրում գործող և հետևյալ գործողությունները կատարող ծրագրային փաթեթի միջոցով.

1. փաստացի ժամանակային շարքերի միջոցով VAR(1) մոդելի անհայտ պարամետրերի գնահատում.
2. մոդելի լուծում գործակիցների տարբեր արժեքների դեպքում (նախ կատարվում է գործակիցների արժեքների պատահական փնտրում, այնուհետև, ստացվող նախնական արդյունքների հիման վրա՝ ցանցային որոնում).
3. նույնանուն ցնցումների պարագայում VAR(1) և DSGE մոդելների IR (Impulse Response) ֆունկցիաների հաշվարկ, դրանց միջև հեռավորության համեմատություն և DSGE գործակիցների այն համակցության ընտրություն, որն ապահովում է նվազագույն հեռավորություն:

Գնահատման արդյունքներն են.

h	σ	β_q	β_m	β_h	β_w	w_m	w_h	θ_w	ε_w	φ	β_i
0.65	2.50	0.3	0.45	0.6	0.3	0.4	0.5	0.65	3	1	0.4

Ինչպես տեսնում ենք, ներկայացուցչական տնային տնտեսության վարքագծի վրա որոշիչ ազդեցություն ունի սպառման սովորույթների և իներցիայի բարձր աստիճանը $(h = 0.65)$: Գների միջին տևողությունը տնտեսության ներմուծման հատվածում 1.7 եռամսյակ է, իսկ ներքին տնտեսությունում՝ 2 եռամսյակ: Աշխատանքային պայմանագրերի միջին տևողությունը գնահատվել է գրեթե 3 եռամսյակ, ինչը վկայում է այն մասին, որ տնտեսությունում գներն ավելի հաճախ են ճշգրտվում, քան անվանական աշխատավարձերը:

Դրամավարկային քաղաքականությունը ներկայացվում է Թեյլորի ձևափոխված կանոնով [2]: Գնահատման արդյունքում ստացվել է, որ կենտրոնական բանկը, ներկա պահին սահմանելով տոկոսադրույքների մակարդակ, հաշվի է առնում ոչ միայն գնաճի ցուցանիշը, այլև տոկոսադրույքի նախորդ ժամանակահատվածի արժեքները (0.4 կշռով): Կենտրոնական բանկն իրականացնում է տոկոսադրույքի հարթեցում. վարքագիծ, որ բնորոշ է գրեթե բոլոր կենտրոնական բանկերին՝ առավել ևս զարգացող ֆինանսական համակարգ ունեցող երկրներում: Նման գործողությունը հնարավորություն է տալիս տոկոսադրույքների կտրուկ տատանումների դեպքում խուսափելու ֆինանսական շուկայում հավանական անկայունության առաջացումից:

Այսպիսով, մոդելի կառուցվածքային գործակիցների գնահատումը թույլ է տալիս, տարբեր ցնցումների պարագայում լուծելով մոդելը և, հիմքում ունենալով տնտեսական գործակալների վարքագիծ, մեկնաբանել ՀՀ տնտեսության դինամիկ վարքը և նկարագրել դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմը:

Հիմք ընդունելով գործակիցների գնահատված արժեքները՝ աշխատանքի հաջորդ մասում դիտարկենք մոդելի հատկությունները:

4. Մոդելի փոփոխականների արձագանքը տարաբնույթ ցնցումներին

Մոդելը, որը բերվում է տարբերակային հավասարումների համակարգի, գործակիցների գնահատված արժեքների դեպքում լուծվել է *MatLab* ծրագրային միջավայրում գործող *IRIS Toolbox*-ի միջոցով: Որպեսզի հնարավոր լինի դատողություններ անել աշխատավարձերի կոշտության ունեցած ազդեցության վերաբերյալ, նույն ցնցման ազդեցությունը դիտարկվել է երկու հնարավոր դեպքերի համար.

1.կոշտ աշխատավարձեր՝ $\theta_w = 0.65,$

2.ճկուն աշխատավարձեր՝ $\theta_w \approx 0,$

Գրաֆիկների միջոցով պատկերվում է 1% ցնցման պարագայում մոդելի փոփոխականների դինամիկան (Հավելված 3), որը միարժեքորեն որոշվում է մոդելի հավասարումների և պարամետրերին տրված արժեքների միջոցով: Հոծ գծով պատկերվում է ճկուն $(\theta_w \approx 0),$ իսկ կետագծով՝ կոշտ աշխատավարձերով մոդելի փոփոխականների դինամիկան $(\theta_w = 0.65)$:

Քանի որ ցնցման հետևանքով խախտված հավասարակշռության վերականգնումը երկարատև գործընթաց է և ընթանում է մի քանի փուլերով, ապա կսահմանափակվենք միայն սկզբնական փուլը նկարագրելով՝ նպատակ ունենալով մեկնաբանել մոդելի գործողության մեխանիզմը և դրամավարկային քաղաքականության դերը հավասարակշռության վերականգնման գործընթացում:

4.1. Տնտեսության ներսում արտադրված ապրանքների գների աճի ցնցում (գծանկար 1)

Ներքին գների աճը հանգեցնում է ընդհանուր գների մակարդակի (ՍԳԻ) աճի: Արտադրության ոլորտում գների մակարդակի աճը կրճատում է իրական սահմանային ծախսերը և, համաձայն Ֆիլիպսի կորի, գներն ապագայում անկման միտում են ունենում:

Կենտրոնական բանկը (ԿԲ), գործելով դրամավարկային կանոնի համապատասխան և ունենալով ներքին արտադրության ապրանքների գների մակարդակի աճ, բարձրացնում է տոկոսադրույքը: Դրա հետևանքով սպառման մակարդակը կրճատվում է, իսկ ազգային արժույթը՝ արժևորվում:

Ձսպող դրամավարկային քաղաքականության արդյունքում ազգային արժույթի արժևորումը, ինչպես նաև ընդհանուր գների մակարդակի աճը հանգեցնում է իրական փոխարժեքի արժևորման: Իրական փոխարժեքի արժևորումն իր հերթին հանգեցնում է արտաքին մրցունակության անկման՝ արտահանման ծավալները կրճատվում են: Նկատենք, որ կրճատվել էր նաև ներքին արտադրության ապրանքների նկատմամբ հարաբերական պահանջարկը: Նշված գործոնների ազդեցությամբ կրճատվում է իրական ՀՆԱ-ն: Իրական ՀՆԱ-ի կրճատումը հանգեցնում է աշխատուժի պահանջարկի կրճատման, որից հետևում է արտադրության գործընթացում ներգրավված աշխատուժի ծավալի կտրուկ անկումը:

ԿԲ կողմից տոկոսադրույքի բարձրացումը առաջացնում է ազգային արժույթի արժևորում, իսկ քանի որ, համաձայն արված ենթադրության, անվանական փոխարժեքի փոփոխությունն անմիջապես չի փոխանցվում ներմուծված ապրանքների գներին, ապա կունենանք շեղում մեկ գնի օրենքից: Սա փոքր-ինչ մեղմացնում է ՀՆԱ-ի անկումը. այն ավելի քիչ է լինում, քան կլիներ, եթե մեկ գնի օրենքը պահպանվեր $(\psi_t < 0)$: Երբ մեկ գնի օրենքը պահպանվում է, ազգային արժույթի արժևորումը բերում է ներմուծման գների կրճատման՝ հանգեցնելով ներմուծման հանդեպ պահանջարկի աճի, ուստի նաև, այլ հավասար պայմաններում՝ ՀՆԱ-ի կրճատման: Սակայն մեկ գնի օրենքից շեղման դեպքում փոխարժեքի փոփոխությունն անմիջապես չի փոխանցվում ներմուծված ապրանքների գներին. տվյալ դեպքում դրանք որոշ ժամանակ կվաճառվեն ավելի բարձր գներով, ներքին ապրանքների մրցունակության և, հետևաբար, ՀՆԱ-ի անկում անմիջապես տեղի չի ունենա:

Արձանագրված ցնցմանն ի պատասխան ԿԲ-ի գործողությունների արդյունքում, գրանցված մեկ գնի օրենքից բացասական շեղումը, ինչպես նաև ներքին ֆիրմաների իրական սահմանային ծախսերի անկումը նվազեցնում է ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերը: Սա նշանակում է, որ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը օբյեկտիվ տնտեսական հիմքեր է ստեղծում ներմուծող ֆիրմաների կողմից գների իջեցման համար:

Աշխատուժի և սպառման միջև փոխարինման սահմանային նորմը կրճատվում է սպառման և աշխատաժամանակի կրճատման հետևանքով:

Ճկուն աշխատավարձերի դեպքում պահպանվում է աշխատուժի և սպառման փոխարինման ներժամանակային պայմանը, այն է՝ $w_t - p_t = mrs_t$, որից հետևում է, որ փոխարինման սահմանային նորմի կրճատումը հանգեցնում է իրական աշխատավարձերի կրճատման:

Մյուս կողմից, կոշտ աշխատավարձերով մոդելում աճում է աշխատավարձերի հավելադիրը, ինչը, համաձայն աշխատավարձերի նորքեյնսյան Ֆիլիպսի կորի, հանգեցնում է աշխատավարձերի մակարդակի կրճատման:

Կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն: Կոշտ աշխատավարձերով մոդելում աշխատավարձերը, ավելի դանդաղ արձագանքելով ցնցմանը, ավելի քիչ են նվազում[12], $w_t^{\text{կոշտ}} > w_t^{\text{ճկուն}}$ որից հետևում է, որ իրական սահմանային ծախսերը ևս քիչ են կրճատվում՝ $w_t^{\text{կոշտ}} > w_t^{\text{ճկուն}} \Rightarrow mc_t^{\text{կոշտ}} > mc_t^{\text{ճկուն}}$, ինչը նշանակում է, որ ներքին արտադրության և ներմուծման գները հարաբերականորեն բարձր են մնում: Որպես հետևանք՝ դրամավարկային մարմինը ավելի զսպողական քաղաքականություն է վարում և տոկոսադրույքները համեմատաբար ավելի շատ են բարձրացվում, ինչը հանգեցնում է սպառման ավելի մեծ կրճատման և ազգային արժույթի ավելի մեծ արժևորման: Սա էլ իր հերթին նշանակում է ՀՆԱ-ի ավելի մեծ կրճատում, որից բխում է գործազուրկների ավելի մեծ թվաքանակը: Ֆորմալ նկարագրված շղթան կլինի.

$$i_t^{\text{կոշտ}} > i_t^{\text{ճկուն}} \Rightarrow c_t^{\text{կոշտ}} < c_t^{\text{ճկուն}}, y_t^{\text{կոշտ}} < y_t^{\text{ճկուն}} \Rightarrow n_t^{\text{կոշտ}} < n_t^{\text{ճկուն}}$$

Ստացվեց, որ տնտեսական փոփոխությունների նկատմամբ աշխատավարձերի նվազ զգայունության հետևանքով ավելի շատ աշխատողներ են հայտնվում գործազուրկի կարգավիճակում: Աշխատավարձերի ճկունությունը թույլ է տալիս խուսափել այդ լրացուցիչ գործազրկությունից:

4.2. Ներմուծված ապրանքների գների աճի ցնցում (գծանկար 2)

Ներմուծված ապրանքների գների աճը հանգեցնում է ընդհանուր գների մակարդակի (ՍԳԻ) աճի: Արձանագրված գնաճին ԿԲ-ն արձագանքում է տոկոսադրույքների բարձրացմամբ: Որպես կիրառվող դրամավարկային քաղաքականության հետևանք՝ տեղի է ունենում սպառման կրճատում և արժևորվում է ազգային արժույթը:

Բացի այդ, տոկոսադրույքի բարձրացումը արժևորում է նաև իրական փոխարժեքը: Իրական փոխարժեքի արժևորումը հանգեցնում է արտաքին մրցունակության անկման. արտահանումը կրճատվում է: Տնտեսությունում սպառման կրճատման և իրական փոխարժեքի արժևորման հետևանքով իրական ՀՆԱ-ն կրճատվում է: Թողարկման ծավալների նվազման հետևանքով կրճատվում է աշխատանքային ռեսուրսների նկատմամբ պահանջարկը: Սա նշանակում է, որ տնտեսությունում նվազում է զբաղվածների թվաքանակը և միջին աշխատավարձերի մակարդակը: Ազգային արժույթի արժևորումը իր հերթին խորացնում է ներմուծման գների աճով պայմանավորված մեկ գնի օրենքից առաջացած շեղումը: Նկատենք, որ մեկ գնի օրենքից բացասական շեղման առկայությունը փոքր-ինչ թուլացնում է իրական փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա[13]:

ԿԲ կողմից տոկոսադրույքի բարձրացումը ներմուծված ապրանքների գների[14] նվազման վրա ճնշումներ է առաջ բերում ազգային արժույթի արժևորման միջոցով, նվազում են ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերը, հետևաբար նաև՝ ներմուծված ապրանքների գների մակարդակը:

Աշխատուժի և սպառման միջև փոխարինման սահմանային նորմը կրճատվում է սպառման և աշխատաժամանակի կրճատման հետևանքով:

Ճկուն աշխատավարձերի դեպքում պահպանվում է աշխատուժի և սպառման փոխարինման ներժամանակային պայմանը, այն է՝ $w_t - p_t = mrs_t$, որից հետևում է, որ սպառման և աշխատաժամանակի կրճատումը հանգեցնում է իրական աշխատավարձերի կրճատման:

Մյուս կողմից, կոշտ աշխատավարձերով մոդելում աճում է աշխատավարձերի հավելադիրը, ինչը, համաձայն աշխատավարձերի նորքեյնսյան Ֆիլիպսի կորի, հանգեցնում է աշխատավարձերի մակարդակի կրճատման: Աշխատավարձերի կրճատմամբ պայմանավորված՝ նվազում են իրական սահմանային ծախսերը, ինչն էլ ապագայում գների անկման պատճառ է դառնում՝ համաձայն Ֆիլիպսի կորի:

Կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն: Նկատենք, որ կոշտ աշխատավարձերի պարագայում աշխատավարձերի մակարդակը համեմատաբար քիչ է կրճատվում, ինչն իր հերթին նշանակում է ավելի բարձր իրական սահմանային ծախսեր $w_t^{\text{կոշտ}} > w_t^{\text{ճկուն}} \Rightarrow mc_t^{\text{կոշտ}} > mc_t^{\text{ճկուն}}$ և, հետևաբար, համաձայն գնաճի Ֆիլիպսի կորի՝ նաև ավելի բարձր ներքին գներ: Ուստի, համաձայն դրամավարկային քաղաքականության կանոնի՝ ԿԲ-ն կոշտ աշխատավարձի դեպքում սահմանում է ավելի բարձր տոկոսադրույքների մակարդակ՝ վարելով ավելի զսպողական քաղաքականություն: Սա իր հերթին նկատելի խորացնում է սպառման անկումը (հետևաբար նաև ՀՆԱ-ի)՝ թեթևակի ազդելով նաև անվանական փոխարժեքի վրա: Կոշտ աշխատավարձերի դեպքում ՀՆԱ-ի ավելի մեծ անկումը հանգեցնում է զբաղվածների ավելի մեծ կրճատման:

---

[12] *Փոփոխականի վերևում նշվում է, թե տվյալ արժեքը որ մոդելին է վերաբերում՝ կոշտ, թե ճկուն աշխատավարձերով:*

[13] *Մեկնաբանությունը տես 4.1-ում:*

[14] *Սկզբում ներմուծված ապրանքների գները ավելացան, որից հետո ԿԲ-ի գործողությունները գների բարձր մակարդակի վրա նվազման ուղղությամբ ճնշումներ առաջ բերեցին:*

Նկարագրված շղթան է. $i_t^{կոշտ} > i_t^{ճկուն} \Rightarrow c_t^{կոշտ} < c_t^{ճկուն}, y_t^{կոշտ} < y_t^{ճկուն} \Rightarrow n_t^{կոշտ} < n_t^{ճկուն}$

Այսպիսով, կոշտ աշխատավարձերի դեպքում ներմուծված ապրանքների գների աճի դրական ցնցման հետևանքով խախտված հավասարակշռության վերականգնման գործընթացի սկզբնական փուլը ուղեկցվում է ՀՆԱ-ի ավելի կտրուկ անկմամբ, զբաղվածների ավելի մեծ կրճատմամբ, աշխատավարձերի ու գների ավելի բարձր մակարդակով:

4.3. Աշխատավարձերի հավելաճի տեմպի (π_t^w) ցնցում (գծանկար 3)

Տվյալ դեպքում քննարկվում է միայն կոշտ աշխատավարձերով մոդելի փոփոխականների դինամիկան, քանի որ ճկուն աշխատավարձերով մոդելում աշխատավարձերն անմիջապես ճշգրտվում են գրանցված ցնցմանը համապատասխան, այսինքն՝ բոլոր փոփոխականները ցնցման պահին, հետևաբար նաև՝ հետագայում, կայուն վիճակում են:

Աշխատավարձերի աճը հանգեցնում է ներքին ֆիրմաների իրական սահմանային ծախսերի աճի: Համաձայն գնաճի Ֆիլիպսի կորի՝ ներքին գները սկսում են աճել: Ներքին գների աճը հանգեցնում է ընդհանուր գների մակարդակի (ՍԳԻ) աճի: ԿԲ-ն, արձագանքելով ներքին գների աճին, բարձրացնում է տոկոսադրույքը, որի հետևանքով սպառումը կրճատվում է, իսկ ազգային արժույթը՝ արժևորվում:

Քանի որ ազգային արժույթի անվանական արժևորումից բացի աճում են նաև ընդհանուր գները, ապա իրական փոխարժեքը կսկսի արժևորվել ավելի մեծ չափով, քան անվանական փոխարժեքը: ԿԲ կողմից տոկոսադրույքի բարձրացումը ազգային արժույթի արժևորման միջոցով առաջացնում է շեղում մեկ գնի օրենքից: Իրական փոխարժեքի արժևորման հետևանքով ընկնում է տնտեսության մրցունակությունը. արտահանումը նվազում է: Իրական փոխարժեքի արժևորումը և սպառման կրճատումը հանգեցնում են ամբողջական պահանջարկի կրճատմանը: Իրական փոխարժեքի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա փոքր-ինչ մեղմանում է՝ պայմանավորված մեկ գնի օրենքից շեղման առկայությամբ[15]: Թողարկման ծավալների կրճատման պատճառով նվազում է աշխատուժի հանդեպ պահանջարկը, ինչը նշանակում է զբաղվածության կրճատում և միջին աշխատավարձերի մակարդակի նվազում: Չնայած ազգային արժույթի արժևորմանը՝ ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերը չեն կրճատվում. պատճառը ներքին ֆիրմաների բարձր իրական սահմանային ծախսերն են (mc_t-ն): Հետագայում, մեծապես պայմանավորված mc_t-ի կրճատմամբ, ներմուծման գներն աստիճանաբար նվազում են:

Մյուս կողմից, սպառման և աշխատաժամանակի կրճատման հետևանքով նվազում է փոխարինման սահմանային նորմը:

Ցնցման պահին տնտեսությունում միջին աշխատավարձերի հավելադրի շեղումն իր կայուն վիճակից դրական է՝ $\mu_t^w > 0$, ինչը նշանակում է՝ աշխատաշուկայում այդ պահին առկա հավելադիրը գերազանցում է մենաշնորհային միջավայրում հավելադրի ցանկալի մակարդակը: Սա նշանակում է, որ ապագայում տնային տնտեսությունները, հնարավորություն ստանալով ճշգրտելու աշխատավարձերի մակարդակը, հակված կլինեն սահմանելու ավելի ցածր աշխատավարձեր:

4.4. Արտերկրի սպառման կամ իրական ՀՆԱ-ի ցնցում (գծանկար 4)

Ռիսկերի բաշխման պայմանով ներքին տնտեսության սպառումը, կապակցված լինելով արտերկրի եկամուտների հետ, ավելանում է՝ պայմանավորված արտերկրի եկամուտների աճով: Արտերկրի սպառման կամ իրական ՀՆԱ-ի ցնցումը մեծացնում է արտահանման ծավալը պահանջարկը: Արտահանման աճը, ըստ էության, տնտեսության եկամուտների աճ է նշանակում, որը սպառման աճի հետ մեկտեղ հանգեցնում է ներքին արտադրության ապրանքների ծավալի պահանջարկի աճի: Արդյունքում՝ աճում է իրական ՀՆԱ-ն: Սա իր հերթին մեծացնում է աշխատուժի հանդեպ պահանջարկը՝ հանգեցնելով նաև աշխատավարձերի աճի:

Մյուս կողմից, աճում է փոխարինման սահմանային նորմը՝ սպառման և աշխատաժամանակի աճով պայմանավորված:

Ճկուն աշխատավարձերով մոդելում $w_t - p_t = mrs_t$, ուստի, փոխարինման սահմանային նորմի աճով պայմանավորված, աճում են նաև իրական սահմանային ծախսերը:

---

[15] *Մեկնաբանությունը 4.1-ում:*

Կոշտ աշխատավարձերով մոդելում աշխատավարձերի հավելադրի բացասական լինելը $(\mu_t^w < 0)$ պատճառ է դառնում աշխատավարձերի աճի: Բարձր աշխատավարձերը հանգեցնում է բարձր իրական սահմանային ծախսերի, որն էլ բարձրացնում է ներքին գների մակարդակը: ԿԲ-ն արձանագրված գնաճին արձագանքում է տոկոսադրույքների բարձրացմամբ, արդյունքում՝ սպառումը կրճատվում է, ազգային արժույթը՝ արժևորվում: Բացի այդ, տոկոսադրույքի բարձրացումը արժևորում է նաև իրական փոխարժեքը: Իրական փոխարժեքի արժևորումը զսպում է սպառման և իրական ՀՆԱ-ի աճը: Ներմուծված ապրանքների գները ավելի թույլ են արձագանքում փոխարժեքի արժևորմանը, քանի որ աշխատավարձերի աճը հանգեցրել է ներքին ֆիրմաների, ուստի նաև ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերի աճի:

Փոխարժեքի արժևորումը և ներմուծման գների աճը հանգեցնում է շեղում մեկ գնի օրենքից: Իրական ՀՆԱ-ի աճն ավելի մեծ է լինում, քան կլիներ, եթե մեկ գնի օրենքը պահպանվեր:

Կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն: Նկատենք, որ կոշտ աշխատավարձերի պարագայում աշխատավարձերն ավելի քիչ են աճում $w_t^{կոշտ} < w_t^{ճկուն}$, ինչը նշանակում է ներքին իրական սահմանային ծախսերի $mc_t^{կոշտ} < mc_t^{ճկուն}$, հետևապես ներքին արտադրության և ներմուծված ապրանքների գների հարաբերականորեն ցածր մակարդակ: Ուստի ԿԲ-ն ավելի մեղմ քաղաքականություն է վարում՝ $i_t^{կոշտ} < i_t^{ճկուն} \Rightarrow c_t^{կոշտ} > c_t^{ճկուն}, y_t^{կոշտ} > y_t^{ճկուն} \Rightarrow n_t^{կոշտ} > n_t^{ճկուն}$:

Արդյունքում ստացվեց, որ հավասարակշռության վերականգնման գործընթացը կոշտ աշխատավարձերի պարագայում ուղեկցվում է ավելի բարձր սպառման և իրական ՀՆԱ-ի մակարդակով: Գործեց պահանջարկի օրենքը. ճկուն աշխատավարձերի դեպքում ավելի բարձր աշխատավարձերը հանգեցրին ավելի ցածր զբաղվածության:

4.5. Տոկոսադրույքի ցնցում (գծանկար 5)

Տոկոսադրույքի դրական ցնցումը կրճատում է սպառումը և արժևորում փոխարժեքը: Իրական փոխարժեքի արժևորումը կրճատում է արտաքին և ներքին մրցունակությունը. նվազում են արտահանման ծավալները և ներքին ապրանքների նկատմամբ հարաբերական պահանջարկը: Նշված փոփոխությունները իրական ՀՆԱ-ի վրա ազդում են նվազման ուղղությամբ: Արդյունքում՝ ֆիրմաները կրճատում են աշխատուժի պահանջարկը, ինչից հետևում է, որ կրճատվում է զբաղվածությունը և աշխատավարձերի մակարդակը:

Մյուս կողմից, նվազում է աշխատուժի և սպառման փոխարինման սահմանային նորմը, քանի որ կրճատվել է սպառումը և աշխատաժամանակը:

Դրական աշխատավարձերի հավելադիրը $(\mu_t^w > 0)$ հանգեցնում է աշխատավարձերի կրճատման: Աշխատավարձերի կրճատմամբ պայմանավորված՝ կրճատվում են իրական սահմանային ծախսերը, հետևաբար՝ նաև ներքին գները:

Բացի այդ, փոխարժեքի արժևորման և ներքին իրական սահմանային ծախսերի կրճատման արդյունքում նվազում են ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերը, ուստի նաև՝ ներմուծման գները:

Փոխարժեքի արժևորումը բացասական շեղում է առաջացնում մեկ գնի օրենքից, իսկ ներմուծման գների կրճատումը՝ դրական, սակայն արդյունքում ունենում ենք բացասական շեղում, քանի որ փոխարժեքի արժևորումը բացարձակ արժեքով մեծ է ներմուծման գների կրճատումից $|s_t| > |p_t^m|$: Իրական ՀՆԱ-ի անկումը ավելի քիչ է լինում, քան կլիներ, եթե մեկ գնի օրենքը պահպանվեր:

Քանի որ ներմուծման և ներքին արտադրության ապրանքների գները նվազել են, ապա ԿԲ-ն իջեցնում է տոկոսադրույքները: Դրամավարկային քաղաքականության արդյունքը սպառման աճն է և ազգային արժույթի արժեզրկումը: Հավասարակշռությունը սկսում է վերականգնվել ազգային արժույթի արժեզրկման և սպառման աճի միջոցով:

Կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն: Կոշտ աշխատավարձերի դեպքում աշխատավարձերը, հետևաբար նաև իրական սահմանային ծախսերը ավելի քիչ են նվազում՝ $w_t^{կոշտ} > w_t^{ճկուն} \Rightarrow mc_t^{կոշտ} > mc_t^{ճկուն}$: Սա նշանակում է, որ կոշտ աշխատավարձերի դեպքում ներքին արտադրության և ներմուծված ապրանքների գները հարաբերականորեն բարձր են մնում, ուստի ԿԲ-ն ավելի զսպող քաղաքականություն է վարում:

$i_t^{կոշտ} > i_t^{ճկուն} \Rightarrow c_t^{կոշտ} < c_t^{ճկուն}, y_t^{կոշտ} < y_t^{ճկուն} \Rightarrow n_t^{կոշտ} < n_t^{ճկուն}$:

Կոշտ աշխատավարձերով մոդելում ավելի քիչ գնանկման պարագայում տոկոսադրույքների ավելի բարձր լինելու հետևանքով հավասարակշռության վերականգնման գործընթացը ընթանում է ավելի ցածր սպառման, ՀՆԱ-ի և զբաղվածության մակարդակով, սակայն ավելի բարձր աշխատավարձերով:

4.6. Մոդելների համեմատություն

Փոփոխականների ստանդարտ շեղումների համեմատությունը (Հավելված 4) ամփոփ ներկայացնում և ավելի նկատելի է դարձնում երկու մոդելների տարբերությունները: Մասնավորապես՝ բոլոր ցնցումների դեպքում կոշտ աշխատավարձերով մոդելում աշխատավարձերի ստանդարտ շեղումը ավելի փոքր է. միևնույն արտաքին ազդակի դեպքում աշխատավարձերն ավելի քիչ են փոփոխվում: Սա, ինչպես արդեն գծանկարների միջոցով տեսանք, այն առանցքային գործոնն է, որն էական տարբերություններ է առաջացնում երկու մոդելների հավասարակշռության վերականգնման գործընթացներում: Կոշտ աշխատավարձերի դեպքում մոդելի անցումային դինամիկան էապես փոխվում է:

5. Եզրակացություն

Աշխատանքում կառուցվեց փոքր բաց տնտեսության DSGE մոդել՝ կոշտ աշխատավարձերով: Անկատար աշխատուժի շուկայի քննարկմամբ մոդելի համապատասխանությունը իրականությանը որոշ առումով բարելավվեց: Բացի այդ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ փաստացի տնտեսություններում աշխատավարձերի կոշտությունը անհերքելի երևույթ է, ապա մեծ վստահությամբ կարելի է պնդել, որ նման ենթադրությամբ ընդլայնված մոդելն առավել իրատեսական է և ավելի մեծ հավանականությամբ ունակ կլինի նկարագրել տնտեսությունում ընթացող գործընթացները:

Այն նորքեյնսյան մոդել է. բոլոր հավասարումներն ունեն միկրոտնտեսական հիմքեր, իսկ քննարկվող շուկաները բնութագրվում են մենաշնորհային մրցակցությամբ և գնային կոշտություններով: Մոդելը բաղկացած է ներկայացուցչական տնային տնտեսություններից, ներկայացուցչական ֆիրմաներից, կենտրոնական բանկից և արտաքին հատվածից: Մոդելը և գնահատված գործակիցները օգտագործվում են վերլուծելու համար ՀՀ տնտեսության վարքագիծը:

Մոդելի կառուցվածքային գործակիցները գնահատվել են IRFM մեթոդով: Գնահատված գործակիցները արտահայտում են ՀՀ տնտեսության հիմնական կառուցվածքային հատկությունները: Ներկայացուցչական տնային տնտեսության վարքագծի վրա որոշիչ ազդեցություն ունի սպառման սովորույթների և իներցիայի բարձր աստիճանը $(h = 0.65)$: Գների միջին տևողությունը տնտեսության ներմուծման հատվածում 1.7 եռամսյակ է, իսկ ներքին տնտեսությունում՝ 2 եռամսյակ: Աշխատանքային պայմանագրերի միջին տևողությունը գնահատվել է գրեթե 3 եռամսյակ, ինչը վկայում է այն մասին, որ տնտեսությունում գներն ավելի հաճախ են ճշգրտվում, քան անվանական աշխատավարձերը, ուստի աշխատավարձերի իրական գնողունակությունը տատանողական մեծություն է:

Դրամավարկային քաղաքականությունը ներկայացվում է Թեյլորի ձևափոխված կանոնով: Գնահատման արդյունքում ստացվել է, որ կենտրոնական բանկը, ներկա պահին սահմանելով տոկոսադրույքների մակարդակ, հաշվի է առնում ոչ միայն գնաճի ցուցանիշը, այլև տոկոսադրույքի նախորդ ժամանակահատվածի արժեքները (0.4 կշռով): Կենտրոնական բանկն իրականացնում է տոկոսադրույքի հարթեցում. վարքագիծ, որ բնորոշ է գրեթե բոլոր կենտրոնական բանկերին՝ առավել ևս զարգացող ֆինանսական համակարգ ունեցող երկրներում: Նման գործողությունը հնարավորություն է տալիս տոկոսադրույքների կտրուկ տատանումների դեպքում խուսափելու ֆինանսական շուկայում հավանական անկայունության առաջացումից:

Այսպիսով, մոդելի դիտարկումը թույլ է տալիս, հիմքում ունենալով տնտեսական գործակալների վարքագիծ, մեկնաբանել տնտեսության դինամիկ վարքը և նկարագրել դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմը: Քանի որ վերլուծական առումով հետաքրքրություն է ներկայացնում աշխատավարձերի կոշտության ունեցած ազդեցությունը դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի վրա, ապա աշխատանքում միևնույն ցնցման դեպքում մոդելի անցումային դինամիկան դիտարկվեց կոշտ և ճկուն աշխատավարձերի պարագաներում:

Այսպիսով, մոդելը հնարավորություն է տալիս ընդհանուր հավասարակշռության ներքո նկարագրել ՀՀ տնտեսության դինամիկ վարքը և կարող է օգտագործվել բարձրացնելու համար կիրառվող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը:

Ընդլայնված մոդելի հավասարումներ

1. Սպառման հավասարում.

$$c_t = h\,c_{t-1} + y^*_{t+1} - h\,y^*_t - \frac{(1-h)}{\sigma}\left(rr_t - E_t q_{t+1} - \xi_{t+1}\right) + \varepsilon^c_t = h\,c_{t-1} + y^*_{t+1} - h\,y^*_t - \frac{(1-h)}{\sigma} rr_t +$$

$$\frac{(1-h)}{\sigma}[(1-\beta_q)q_{t-1} + \beta_q q_{t+1}] + \frac{(1-h)}{\sigma}\xi_{t+1} + \varepsilon^c_t$$

որտեղ $E_t q_{t+1} = (1-\beta_q)q_{t-1} + \beta_q q_{t+1}$

2. Ապրանքային շուկաների մաքրման պայման (իրական ՀՆԱ որոշման հավասարում).

$$y_t = (k_1 + k_2)c_t + d_1 q_t - d_2 \psi_t + (1 - k_1 - k_2 - k_3)y^*_t + k_3\, gov_t + \varepsilon^y_t$$

որտեղ՝ $d_1 = \left(\frac{k_1 a\gamma}{1-\gamma} - k_2 a + \frac{(1-k_1-k_2-k_3)a^*}{1-\gamma}\right),\quad d_2 = \left(\frac{k_1 a\gamma}{1-\gamma} - k_2 a + \frac{(1-k_1-k_2-k_3)a^*\gamma}{1-\gamma}\right)$

3. Ներմուծված ապրանքների գնաճի հավասարում.

$$\pi^m_t = \beta_m \pi^m_{t-1} + (1-\beta_m)\left(\beta E_t \pi^m_{t+1} + \frac{(1-w_m)(1-\beta w_m)}{w_m}\psi^m_t\right) + \varepsilon^{\pi^m}_t = \beta_m \pi^m_{t-1} + (1-\beta_m)$$

$$\left(\beta E_t \pi^m_{t+1} + \frac{(1-w_m)(1-\beta w_m)}{w_m}\left((1-\gamma_\psi)mc_t - \frac{(1-\gamma_\psi)}{1-\gamma}q_t + \frac{(1-\gamma\gamma_\psi)}{1-\gamma}\psi_t\right)\right) + \varepsilon^{\pi^m}_t = \beta_m \pi^m_{t-1} + (1-\beta_m)$$

$$\left(\beta E_t \pi^m_{t+1} + \frac{(1-w_m)(1-\beta w_m)}{w_m}\left[(1-\gamma_\psi)\left(\omega_t + \frac{\gamma}{1-\gamma}(q_t - \psi_t) - a_t\right) - \frac{(1-\gamma_\psi)}{1-\gamma}q_t + \frac{(1-\gamma\gamma_\psi)}{1-\gamma}\psi_t\right]\right) + \varepsilon^{\pi^m}_t = \beta_m \pi^m_{t-1} +$$

$$(1-\beta_m)\beta E_t \pi^m_{t+1} + (1-\beta_m)\frac{(1-w_m)(1-\beta w_m)}{w_m}\left[(1-\gamma_\psi)\omega_t - (1-\gamma_\psi)q_t + \psi_t - (1-\gamma_\psi)a_t\right] + \varepsilon^{\pi^m}_t$$

4. Ներքին արտադրության ապրանքների գնաճի հավասարում.

$$\pi^h_t = \beta_h \pi^h_{t-1} + (1-\beta_h)\left(\beta E_t \pi^h_{t+1} + \frac{(1-w_h)(1-\beta w_h)}{w_h} mc_t\right) + \varepsilon^{\pi^h}_t = \beta_h \pi^h_{t-1} + (1-\beta_h)$$

$$\left(\beta E_t \pi^h_{t+1} + \frac{(1-w_h)(1-\beta w_h)}{w_h}\left(\omega_t + \frac{\gamma}{1-\gamma}q_t - \frac{\gamma}{1-\gamma}\psi_t - a_t\right)\right) + \varepsilon^{\pi^h}_t$$

5. Աշխատավարձերի ինֆլյացիայի հավասարում.

$$\pi^w_t = \beta_w \pi^w_{t-1} + (1-\beta_w)\left[\beta E_t \pi^w_{t+1} - \frac{(1-\beta\theta_w)(1-\theta_w)}{\theta_w(1+\varepsilon_w\varphi)}\left(\omega_t - \frac{\sigma}{1-h}(c_t - hc_{t-1}) - \varphi(y_t - a_t)\right)\right] + \varepsilon^{\pi^w}_t$$

6. Իրական փոխարժեքի հավասարում.

$$q_t = \beta_q q_{t-1} + (1-\beta_q)E_t q_{t+1} - rr_t + rr^*_t - \xi_t + \xi_{t+1} + \varepsilon^q_t$$

7. Դրամավարկային քաղաքականության կանոն.

$$i_t = \beta_i i_{t-1} + (1-\beta_i)(\beta_{\pi^h}\pi^h_t + \beta_{\pi^m}\pi^m_t) + \varepsilon^i_t$$

Նույնություններ.

8. Արտերկրի իրական ՀՆԱ. $y_t^* = \rho_{y^*} y_{t-1}^* + \varepsilon_t^{y^*}$
9. Մեկ գնի օրենքից շեղում. $\psi_t - \psi_{t-1} = \Delta s_t + \pi_t^* - \pi_t^m$
10. Անվանական փոխարժեքի փոփոխություն. $\Delta s_t = q_t - q_{t-1} - \pi_t^* + \pi_t$
11. Ընդհանուր գնաճ. $\pi_t = (1-\gamma)\,\pi_t^h + \gamma\,\pi_t^m$
12. Իրական աշխատավարձ. $\omega_t = \omega_{t-1} + \pi_t^w - \pi_t$
13. Ներքին իրական տոկոսադրույք. $rr_t = i_t - E_t\pi_{t+1}$
14. Արտերկրի իրական տոկոսադրույք. $rr_t^* = i_t^* - \pi_{t+1}^*$
15. Արտերկրի անվանական տոկոսադրույք. $i_t^* = \rho_{i^*} i_{t-1}^* + \varepsilon_t^{i^*}$
16. Արտերկրի գնաճ. $\pi_t^* = \rho_{\pi^*} \pi_{t-1}^* + \varepsilon_t^{\pi^*}$
17. Մասնավոր տրանսֆերտներ. $\xi_t = \rho_\xi \xi_{t-1} + \varepsilon_t^\xi$
18. Պետական գնումներ. $gov_t = \rho_{gov} gov_{t-1} + \varepsilon_t^{gov}$
19. Ներքին արտադրողականություն. $a_t = \rho_a a_{t-1} + \varepsilon_t^a$

Ընդլայնված մոդելի հավասարումների համակարգի ներկայացումը մատրիցային տեսքով


$$
\begin{bmatrix}
1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & h & 0 & 0 & 0 & 0 & \frac{1-h}{\sigma} & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
-(k_1+k_2) & 1 & 0 & 0 & 0 & -d_1 & 0 & -(1-k_1-k_2-k_3) & d_2 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -k_3 & 0 \\
0 & 0 & 1 & 0 & 0 & k_m(1-\gamma_\psi) & 0 & 0 & -k_m & 0 & 0 & -k_m(1-\gamma_\psi) & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & k_m(1-\gamma_\psi) \\
0 & 0 & 0 & 1 & 0 & -k_h\frac{\gamma}{1-\gamma} & 0 & 0 & k_h\frac{\gamma}{1-\gamma} & 0 & 0 & -k_h & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & k_h \\
-k_w\frac{\sigma}{1-h} & -k_w\varphi & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & k_w & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & k_w\varphi \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & -1 & 0 & 0 & 1 & 0 & 0 \\
0 & 0 & -(1-\beta_i)0.7 & -(1-\beta_i)0.7 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & -\gamma & -(1-\gamma) & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & -1 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1
\end{bmatrix} \times
$$

$$
\begin{bmatrix} c_t \\ y_t \\ \pi_t^m \\ \pi_t^h \\ \pi_t^w \\ q_t \\ i_t \\ y_t^* \\ \psi_t \\ \Delta s_t \\ \pi_t \\ \omega_t \\ rr_t \\ rr_t^* \\ i_t^* \\ \pi_t^* \\ \xi_t \\ gov_t \\ a_t \end{bmatrix} =
\begin{bmatrix}
0 & 0 & 0 & 0 & 0 & \frac{(1-h)(1-\beta_q)}{\sigma} & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \frac{(1-h)}{\sigma} & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & (1-\beta_m)\beta & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & (1-\beta_h)\beta & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & (1-\beta_w)\beta & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & (1-\beta_q) & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0
\end{bmatrix} \times E_t
\begin{bmatrix} c_{t+1} \\ y_{t+1} \\ \pi_{t+1}^m \\ \pi_{t+1}^h \\ \pi_{t+1}^w \\ q_{t+1} \\ i_{t+1} \\ y_{t+1}^* \\ \psi_{t+1} \\ \Delta s_{t+1} \\ \pi_{t+1} \\ \omega_{t+1} \\ rr_{t+1} \\ rr_{t+1}^* \\ i_{t+1}^* \\ \pi_{t+1}^* \\ \xi_{t+1} \\ gov_{t+1} \\ a_{t+1} \end{bmatrix} +
$$


$$
+\begin{bmatrix}
h & 0 & 0 & 0 & 0 & \frac{(1-h)\beta_q}{\sigma} & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & \beta_m & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & \beta_h & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
-k_w \frac{\sigma h}{1-h} & 0 & 0 & 0 & \beta_w & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & \beta_q & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \beta_i & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho^*_{gdp} & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_{i^*} & 0 & 0 & 0 & 0 & \varepsilon_t^{i^*} & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_{\pi^*} & 0 & 0 & 0 & \varepsilon_t^{\pi^*} & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_{\xi} & 0 & 0 & \varepsilon_t^{\xi} & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_{gov} & 0 & \varepsilon_t^{gov} & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_a & \varepsilon_t^a & 0
\end{bmatrix}
\times
\begin{bmatrix}
c_{t-1} \\ y_{t-1} \\ \pi^m_{t-1} \\ \pi^h_{t-1} \\ \pi^w_{t-1} \\ q_{t-1} \\ i_{t-1} \\ y^*_{t-1} \\ \psi_{t-1} \\ \Delta s_{t-1} \\ \pi_{t-1} \\ \omega_{t-1} \\ rr_{t-1} \\ rr^*_{t-1} \\ i^*_{t-1} \\ \pi^*_{t-1} \\ \xi_{t-1} \\ gov_{t-1} \\ a_{t-1}
\end{bmatrix}
+
\begin{bmatrix}
\varepsilon_t^c \\ \varepsilon_t^y \\ \varepsilon_t^{\pi^m} \\ \varepsilon_t^{\pi^h} \\ \varepsilon_t^{\pi^w} \\ \varepsilon_t^q \\ \varepsilon_t^i \\ \varepsilon_t^{y^*} \\ 0 \\ 0 \\ 0 \\ 0 \\ 0 \\ 0 \\ \varepsilon_t^{i^*} \\ \varepsilon_t^{\pi^*} \\ \varepsilon_t^{\xi} \\ \varepsilon_t^{gov} \\ \varepsilon_t^a
\end{bmatrix}
$$

Մոդելի փոփոխականների դինամիկ արձագանքը տարաբնույթ ցնցումներին


Գծանկար 1. Ներքին արտադրության ապրանքների գնածի ցնցում




Գծանկար 2. Ներմուծված ապրանքների գնածի ցնցում




Գծանկար 3. Աշխատավարձերի ինֆլյացիայի ցնցում



Գծանկար 4. Արտերկրի իրական ՀՆԱ-ի ցնցում



Գծանկար 5. Տոկոսադրույքի ցնցում



Հավելված 4

Կոշտ $(\theta_w = 0.65)$ և ճկուն $(\theta_w \approx 0)$ աշխատավարձերով մոդելների փոփոխականների ստանդարտ շեղումներ տարաբնույթ ցնցումների դեպքում

σ	$\varepsilon_t^{\pi^h} = 1$		$\varepsilon_t^{\pi^m} = 1$		$\varepsilon_t^{y^*} = 1$		$\varepsilon_t^{i} = 1$	
	$\theta_w \approx 0$	$\theta_w = 0.65$	$\theta_w \approx 0$	$\theta_w = 0.65$	$\theta_w \approx 0$	$\theta_w = 0.65$	$\theta_w \approx 0$	$\theta_w = 0.65$
y_t	0.20	0.31	0.06	0.08	0.05	0.07	0.09	0.14
c_t	0.15	0.24	0.09	0.11	0.04	0.06	0.09	0.13
i_t	0.09	0.13	0.10	0.12	0.02	0.01	0.13	0.15
$w_t - p_t$	0.60	0.47	0.28	0.12	0.17	0.03	0.39	0.05
rr_t	0.07	0.10	0.08	0.08	0.02	0.01	0.17	0.16
π_t	0.13	0.17	0.07	0.07	0.03	0.01	0.06	0.02
π_t^h	0.19	0.25	0.10	0.06	0.04	0.02	0.07	0.03
π_t^m	0.03	0.05	0.22	0.22	0.01	0.01	0.04	0.03
mc_t	0.73	0.66	0.28	0.09	0.17	0.03	0.39	0.06
w_t	**0.46**	**0.21**	**0.47**	**0.29**	**0.14**	**0.02**	**0.31**	**0.04**
s_t	0.22	0.35	0.44	0.44	0.13	0.08	0.19	0.27
Δs_t	0.12	0.17	0.17	0.19	0.04	0.02	0.30	0.33
q_t	0.35	0.52	0.22	0.28	0.13	0.07	0.27	0.34
φ_t^m	0.17	0.17	0.60	0.57	0.03	0.01	0.30	0.25
φ_t	0.15	0.23	0.60	0.60	0.06	0.03	0.28	0.33
mrs_t	0.60	0.91	0.28	0.37	0.17	0.25	0.39	0.51
π_t^w	0.23	0.05	0.22	0.05	0.18	0.02	0.42	0.03
μ_t^w	0.00	0.51	0.00	0.32	0.00	0.22	0.00	0.47
n_t	0.20	0.31	0.06	0.08	0.05	0.07	0.09	0.14

Գրականություն

[1] Ashot Mkrtchyan, Era Dabla-Norris, Ara Stepanyan: “A New Keynesian Model of the Armenian Economy”, IMF Working Paper 09/66.

[2] Բարսեղյան Գ., Դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդել կոշտ աշխատավարձերով, Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, 3, էջ 127-139:

[3] Erceg, Christopher J., Dale W. Henderson, and Andrew T. Levin: Optimal Monetary Policy with Staggered Wage and Price Contracts,” Journal of Monetary Economics 46, N 2, 2000, 281-314:

[4] Blanchard, Olivier J., and Jordi Gali (2006): "Real Wage Rigidities and the New Keynesian Model," Journal of Money Credit and Banking

[5] Rotemberg, J.,Woodford, M., 1997. An optimization based econometric framework for the evaluation of monetary policy. NBER Macroeconomic Annual 12, 297–346.

[6] Christiano, L., Eichenbaum, M., Evans, C., 2005. Nominal rigidities and the dynamic effects of a shock to monetary policy. Journal of Political Economy 113, 1–45.

[7] Altig, David, Lawrence Christiano, Martin Eichenbaum and Jesper Linde (2004): “Firm-Specific Capital, Nominal Rigidities and the Business Cycle”, mimeo, Northwestern University.

[8] Jordi, Oscar and Sharon Kozichi (2005): “An Efficient IRF Matching Estimator for Rational Expectations Models”, mimeo, University of California at Davis.

[9] Boivin, Jean and Marc Giannoni (2006): “Has Monetary Policy Become More Effective?”, Review of Economics and Statistics 88(3), 445-462.

[10] DiCecio, Riccardo (2005): “Comovement: It’s Not a Puzzle”, mimeo, Federal Reserve Bank of St. Louis.

[11] DiCecio, Riccardo and Edward Nelson (2006): “An Estimated DSGE Model for the United Kingdom”, mimeo, Federal Reserve Bank of St. Louis.

[12] Calvo, Guillermo: Staggered Prices in a Utility Maximizing Framework, Journal of Monetary Economics 12, N 3, 1983, 383-398.

[13] Cho S., Moreno A., (2006). “A small sample study of the New Keynesian macro model”, Journal of Money Credit and banking 38, 1462 – 1482.

[14] Hall A., Inoue A., Nason J., Rossi B. (2007) : “Information Criteria for Impulse Response Function Matching Estimation of DSGE Models,” Journal of Econometrics 138(2), 488-512.

[15] Gali Jordi (2008): “Monetary Policy, Inflation and the Business Cycle”, Princeton University Press.

[16] Walsh C. (2003), “Monetary Theory and Policy”, MIT Press, Cambridge MA, second edition.

[17] Blanchard, Olivier J., and C.M. Kahn, 1980, “The solution of linear difference models under rational expectations” Econometrica 48, 1305 – 1311.

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2011